# Խաչակրաց Աղոթքներ

www.thewarningsecondcoming.com

# Խաչակրաց Աղոթքներ

Մարիա Աստվածային Գթասրտություն

Coma Books

Հրատարակված է

Coma Books UK
Ireland

www.comabooks.com

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է 2013Թ.

1 3 5 7 9 10 8 6 4 2

Copyright © Maria Divine Mercy 2012

Հեղինակի բարոյական իրավունքները հաստատված են
Բոլոր իրավունքները պահպանված են

Սույն գրքի CIP կատալոգ գրառումը մատչելի է
բրիտանական գրադարանում

ISBN 978-1-909448-26-1

Վերատպումը՝ թույլտվության
լիազորագրի միջոցով
E: martin-west@btconnect.com

Տպագրված է Լեհաստանում

*Նվիրվում է*

*Տիրամորը՝ Փրկության Մորը*

# Խաչակրաց Աղոթքներ

# Աղոթքներ՝ թելադրված Երկնքից

Լոկուցիաներ՝ տրված Մարիա Աստվածային Գթասրտությանը 2011թ. նոյեմբերից 2013թ. փետրվարը

**Աղոթքներ 1-105, ներառյալ խնդրական աղոթքները**

2013թ. www.thewarningsecondcoming.com
(բոլոր իրավունքները պաշտպանված են)

# Աղոթագրքի մասին

Այս գրքում պարունակվող աղոթքները մարդկային ծագում չունեն: Դրանք տրվել են մի հասարակ կնոջ, մի ամուսացած մոր, ով ապրում է Եվրոպայում և կանչվել է՝ հռչակելու համար Աստծո Խոսքը:

Չցանկանալով ոչ հայտնի լինել, ոչ էլ որևէ ձևով պատվի արժանանալ, նա ստացել է մոտ 700 պատգամներ Երկնքից, սկսած 2010թ. նոյեմբերից, ամեն օր: Բոլոր պատգամները դրված են հետևյալ վեբ սայթում. www.thewarningsecondcoming.com

Այդ պատգամները բացահայտում են Աստծո Ասվածային Պլանը մեռնող աշխարհին, այն ամենի մասին, որ տեղի կունենա վերջին ժամանակներում, որ տանում են դեպի Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը:

Տեսիլքները, պատգամներն ու աղոթքները ստացվել են Սուրբ Հոգու միջոցով և ներկայացվում են այս գրքում այնպես, ինպես թելադրվել են Աստծո ծառային, ով Մարիա Աստվածային Գթասրտության Անվան տակ է:

Ինչպես այն օրերին, երբ Հիսուսը ծնվեց, Աստված ուղարկեց Իր մարգարե Հովհաննես Մկրտչին <<Տիրոջ

ճանապարհը ուղղելու>> և Իսրայելի ազգին զգուշացնելու, որ Մեսիայի վերաբերյալ Եսայու մարգարեությունները իրականանալու վրա են: Հովհաննեսի պատգամն այն էր, որ մարդիկ նախապատրաստվեին գալիք Մեսիայի համար ապաշխարության և հոգևոր մաքրագործման միջոցով: Այսօր մեզ տրվում է նույն պատգամը. Որ Մեսիան շուտով կվերադառնա, և որ մենք պետք է հոգևորապես պատրաստ լինենք: Այլապես մենք հանկարծակիի կգանք և կգտնենք մեզ մահացու ամոթով կանգնած Աստծո առջև՝ մեր մեղքերն աբմողջապես ի ցույց դրված, որի պատճառած շոկը հնարավոր չէ ամբողջությամբ պատկերացնել կամ հասկանալ:

Պատմության ընթացքում Աստծո մարգարեներին մերժել են, ամենաակնառու օրինակը՝ Աստծո միակ Որդին, ով խաչվեց հենց այն մարդկանց կողմից, որոնց փրկելու համար նա եկել էր: Մենք պետք է ենթադրենք, որ այսօր Աստծո պատգամատարներին և հենց Իրեն՝ Աստծուն այլ կերպ չեն ընդունի քան Հովհաննես Մկրտչի օրերում: Սակայն մեր պարտականությունն է զգուշությամբ լսել այն ձայներին, որոնք <<կանչում են անապատում>> մեզ կոչ անելով թողնել ամեն մեղավոր բան և վերադառնալ մեր Արարչի մոտ բաց սրտերով, կամենալով ստանալ Աստծո ներողամտությունն ու Նրա Շնորհը:

Հենց այնպես մերժել նման պատգամները մեզ կանգնեցնում է նույն վտանգի առջև, ինչ նրանց, ովքեր մերժեցին Հովհաննես Մկրտչին և, հետևաբար, Աստծո Որդուն՝ Հիսուս Քրիստոսին:

Ստանալով Աստծո Ճշմարտությունը և հետևելով նրան, ուր էլ որ նա տանի մեզ, մենք, ինչպես Նոյի և Ղովտի ընտանիքները, կարող ենք ազատվել գալիք երկնային պատժից, որը պատրաստ է դուրս հեղվելու ծաղրող աշխարհիկ աշխարհի վրա:

Չնայած ժամանակը սպառվում է, Հիսուսն Իր Ձեռքը պարզում է դեպի մեզ հաշտության միջոցով, որպեսզի ոչ մի հոգի չկորչի: Անկախ նրանից, թե որքան ենք հեռացել Հիսուսից, նրա Գթասրտությունը ստանալով և նրան ներս թողնելով մեր սրտերի մեջ մենք դեռևս կարող ենք ճանաչել մեր Արարչի հետ հաշտության ուրախությունը, երբ ներս մտնենք Աստծո Հավիտենական Թագավորություն:

Մինչ կարդում եք այս գրքում գրանցված աղոթքները, բացեք ձեր սիրտը և աղոթեք, որ Սուրբ Հոգին խոսի ձեզ հետ, լոսավորի ձեր սիրտը և տա այստեղ պարունակվող բառերի աղբյուրը զանգանելու շնորհը:

# Խաչակրաց աղոթքներ և & խնդրական աղոթքներ

## ՑԱՆԿ

## Խաչակրաց աղոթքներ

*Քահանաների համար տրված աղոթքները կապույտով են*


(1) Իմ ընծան Հիսուսին՝ հոգիներ փրկելու համար
նոյեմբեր 17, 2011 - էջ 18
(2) Համաշխարհային ղեկավարների համար
նոյեմբեր 18, 2011 - էջ 19
(3) Աշխարհը վախից ազատելու համար
նոյեմբեր 19, 2011 - էջ 20
(4) Բոլոր ընտանիքների միավորման համար
նոյեմբեր 20, 2011 - էջ 21
(5)Փառաբանություն Ամենաբարձրյալ Աստծուն
նոյեմբեր 21, 2011 - էջ 22
(6) Հակաքրիստոսին կանգնեցնելու համար
նոյեմբեր 22, 2011 - էջ 23
(7) Նրանց համար, ովքեր մերժում են Գթասրտությունը
նոյեմբեր 22, 2011 - էջ 24
(8) Խոստովանությունը
նոյեմբեր 22, 2011 - էջ 25
(9) Տառապանքի առաջարկումը որպես ընծա
նոյեմբեր 28, 2011 - էջ 27
(10)Տանելու համար Քո Սիրո Բոցը
նոյեմբեր 29, 2011 - էջ 28
(11) Տեսանողների հանդեպ ատելությունը դադարեցնելու համար
նոյեմբեր 30, 2011 - էջ29
(12) Աղոթք՝ հպարտության մեղքից խուսափելու համար
դեկտեմբեր 03, 2011 - էջ 30
(13)Կանչ իմունիտետի համար
դեկտեմբեր 11, 2011 - էջ 31
(14)Միջուկային պատերազմի դեմ
դեկտեմբեր 14, 2011 - էջ 32
(15) Շնորհկալություն Աստվածային Գթասրտության ընծայի համար
դեկտեմբեր 19, 2011 - էջ 33
(16) Նախազգուշացման ժամանակ առաջարկվող շնորհներն ընդունելու համար
դեկտեմբեր 31, 2011 – էջ34

(17) Խավար հոգիների համար
հունվար 01, 2012 - էջ 35
(18)Հակաքրիստոսին և նրա խումբը կանգնեցնելու համար
հունվար 11, 2012 - էջ36
(19)Երիտասարդների համար
հունվար 13, 2012 - էջ 37
(20)Կանգնեցնել հակաքրիստոսին աշխարհը ոչնչացնելուց
հունվար 19, 2012 - էջ 38
(21)Շնորհակալություն Հայր Աստծուն Փրկության համար
հունվար 24, 2012 - էջ 39
(22)Հոգևորականների համար. Պահել Եկեղեցու ուսուցումները հունվար 28, 2012 - էջ 40
(23) Բենեդիկտ Պապի անվտանգության համար
հունվար 29, 2012 - էջ 41
(24) Լիակատար ինդուլգենցիա մեղքերի բացարձակ թողության համար
հունվար 31, 2012 – էջ 42
(25) Ամբողջ աշխարհում տեսանողների պաշտպանության համար
փետրվար 4, 2012 – էջ 44
(26) Աղոթք Վարդարանը ձեր ազգը փրկելու համար
փետրվար 05, 2012 – էջ 45
(27) Աշխարհում խաղաղության համար
փետրվար 06, 2012 – էջ 46
(28) Քրիստոնյա եկեղեցիների միավորման համար
փետրվար 08, 2012 – էջ 47
(29) Պաշտպանել քրիստոնեությունը
փետրվար 12, 2012 – էջ 48
(30)Պատերազմից, սովից և կրոնական հալածանքից խուսափելու համար
փետրվար 14, 2012 – էջ 49
(31) Աղոթքի պաշտպանության շղթա
փետրվար 16, 2012 – էջ 50
(32) Իռլանդիայում աբորտը կասեցնելու համար
փետրվար 17, 2012 – էջ 51
(33) Կենդանի Աստծո Կնիքը ընդունելու համար
փետրվար 20, 2012 – էջ 52
(34) Ծոմապահության իմ ընծան Հիսուսին (Պահքի համար)
փետրվար 22, 2012 – էջ 54
(35) Հոգիների դրախտ մտնելու համար մարտ 01, 2012 – էջ 55
(36) Օգնիր ինձ պատվել Ճշմարիտ Աստծուն մարտ 7, 2012 – էջ 56
(37) Աստծո բոլոր զավակների միավորումը մարտ 14, 2012 – էջ 57
(38) Փրկության աղոթք կաթոլիկ եկեղեցու համար մարտ 20, 2012 – էջ 58
(39) Հոգիներին Նոր Դրախտին նախապատրաստելու համար
մարտ 21, 2012 – էջ 60

(40) Հոգևորականների համար. Նախապատրաստել հոգիներին Երկրորդ Գալուստի համար մարտ 24, 2012 – էջ 62
(41) Չհավատացողների հոգիների համար մարտ 25, 2012 – էջ 63
(42) Պահեցողություն՝ մեկ համաշխարհային արժույթը կանգնեցնելու համար մարտ 27, 2012 – էջ 64
(43) Նախազգուշացման ընացքում հոգիներ փրկելու համար ապրիլ 3, 2012 – էջ 65
(44) Իմ հավատը Կեղծ Մարգարեից պաշտպանելու համար ապրիլ 12, 2012 – էջ 66
(45) Բացասական մտքերը հաղթահարելու համար ապրիլ 17, 2012 – էջ 67
(46) Ազատիր ինձ սատանայի շղթաներից ապրիլ 20, 2012 – էջ 68
(47) Վերավառեք ձեր սերը Հիսուսի հանդեպ ապրիլ 22, 2012 – էջ 69
(48) Շնորհ՝ հռչակելու համար Քրիստոսի Երկրորդ Գալուստը ապրիլ 22, 2012 – էջ 70
(49) Հավատարմության խոստում քրիստոնյա հոգևորականների համար ապրիլ 24, 2012 – էջ 71
(50) Հիսուս, օգնիր ինձ իմանալ թե ով ես Դու ապրիլ 30, 2012 – էջ 72
(51) Սուրբ Հոգու Ընծայի համար մայիս 04, 2012 – էջ 73
(52) Աղոթք՝ Հորը մայիս 08, 2012 – էջ 74
(53) Աղոթք՝ կաթոլիկ եկեղեցու համար մայիս 10, 2012 – էջ75
(54) Աղոթք՝ երրորդ համաշխարհային պատերազմի ազդեցությունը նվազեցնելու համար մայիս 16, 2012 - էջ 76
(55) Նախապատրաստվել Նախազգուշացմանը մայիս 21, 2012 – էջ 78
(56) Հոգևորականների համար. Սուրբ Հաղորդությունը պաշտպանելու համար մայիս 26, 2012 – էջ 79
(57) Աղոթք հոգևորականների համար. Հիսուս, թույլ տուր ինձ լսել Քո Կանչը մայիս 28, 2012 – էջ 80
(58) Խաչակրաց աղոթք՝ դարձի համար մայիս 31, 2012 – էջ 81
(59) Նվիրվածության ուխտ՝ Աստվածային Կամքին հունիս 13, 2012 – էջ 83
(60) Նախազգուշացման ընթացքում ընտանիքների դարձի համար հունիս 14, 2012 – էջ 84
(61) Մեկ համաշխարհային վերահսկողությունից խուսափելու համար հունիս 17, 2012 – էջ 85
(62) Կորած անօգնական հոգիների համար հունիս 21, 2012 – էջ 86
(63) Պահպանիր ինձ այս ճամփորդության ընթացքում հունիս 29, 2012 – էջ 87
(64) Իմ եղբայրներին և քույրերին փրկելու համար հուլիս 4, 2012 – էջ 88
(65) Մահացու մեղքի մեջ գտնվողների համար հուլիս 9, 2012 – էջ 89
(66) Հոգևորականների համար. Քո Խոսքին հավատարիմ մնալու համար հուլիս 16, 2012 – էջ 90

(67) Պահիր իմ զավակներին ապահով Ստերի Թագավորից
հուլիս 17, 2012 – էջ 91
(68) Պաշտպանիր ինձ Սատանայի ազդեցությունից հուլիս 23, 2012 – էջ 92
(69) Աղոթք Հայր Աստծուն՝ Նրա Աստվածային Կամքը ընդունելու համար
հուլիս 26, 2012 – էջ 93
(70) Հոգևորականների համար. Աստծո Սուրբ Խոսքի հանդեպ հաստատուն և հավատարիմ մնալու համար հուլիս 30, 2012 – էջ 94
(71) Փրկիր մեզ հալածանքից հուլիս 31, 2012 – էջ 96
(72) Աշակերտի աղոթքը օգոստոս 7, 2012 – էջ 98
(73) Երիտասարդ հոգիների, երիտասարդ երեխաների համար
օգոստոս 16, 2012 – էջ 99
(74) Զանազանության ընծայի համար օգոստոս 22, 1012 – էջ 100
(75) Ես հանձնում եմ իմ ցավը քեզ, սիրելի Հիսուս
սեպտեմբեր 4, 2012 – էջ 101
(76) Աթեիստների աղոթքը սեպտեմբեր 10, 2012 – էջ 103
(77) Մեծ Բրիտանիայի համար
սեպտեմբեր 17, 2012 – էջ 104
(78) Փրկիր ինձ Չարից սեպտեմբեր 25, 2012 – էջ 105
(79) 2 միլիարդ կորած հոգիների համար
սեպտեմբեր 27, 2012 – էջ 106
(80) Նրանց հոգիների համար, ովքեր մարդասպանություն են գործում
հոկտեմբեր14, 2012 – էջ 107
(81) Սուրբ Հաղորդության ընծայի համար հոկտեմբեր 19, 2012 – էջ 108
(82) Մնացորդ եկեղեցու հաղթանակի համար հոկտեմբեր 25, 2012 – էջ 109
(83) Երկնային պատիժների նվազեցման համար նոյեմբեր 1, 2012 – էջ 111
(84) Աշխարհը ղեկավարող էլիտայի հոգիների լուսավորման համար
նոյեմբեր 9, 2012 – էջ 113
(85) Ամերկայի միացյալ նահանգները խաբեբայից փրկելու համար
նոյեմբեր 17, 2012 – էջ 115
(86) Ազատիր ինձ կասկածի տառապանքից նոյեմբեր 27, 2012 – էջ 116
(87) Պաշտպանիր մեր ազգը Չարից նոյեմբեր 30, 2012 – էջ 118
(88) Հոգիների համար՝ Նախազգուշացումից հետո
դեկտեմբեր 3, 2012 – էջ 120
(89) Թշվառ մեղավորների համար դեկտեմբեր 15, 2012 – էջ 122
(90) Շնորհակալություն Քո Ամենափառավոր Երկրորդ Գալուստի համար
դեկտեմբեր 22, 2012 – էջ 123
(91)Պահիր ինձ հավատրիմ իմ հավատքի հանդեպ (հալածանքի ժամանակ)
հունվար 4, 2013 – էջ 124
(92) Տոկունության շնորհի համար հունվար 6, 2013 – էջ 125
(93) Ապաշխարության արցունքների համար հունվար 11, 2013 – էջ 126
(94) Միտքը, մարմինը և հոգին բուժելու համար հունվար 15, 2013 – էջ 127
(95) Օգնելու՝ աղոթքի համար ժամանակ գտնելու համար
հունվար 23, 2013 – էջ 128

(96) Մեր խաչակրաց աղոթքի խումբը օրհնելու և պաշտպանելու համար
հունվար 25, 2013 – էջ 129
(97) Որպեսզի Աստծո Շնորհը ծածկի աշխարհի առաջնորդներին
փետրվար 03, 2013 – էջ 130
(98) Խաչակրաց աղոթքի խմբերը միավորելու համար
փետրվար 05, 2013 – էջ 131
(99) Ավստրալիայի և Նոր Զելանդիայի փրկության համար
փետրվար 10, 2013 – էջ 132
(100) Քրիստոնեության գոյատևման համար փետրվար 13, 2013 – էջ 133
(101) Հրաշք աղոթք՝ Հիսուսի ներկայությունը զգալու համար
փետրվար, 19, 2013 – էջ 135
(102) Աշխարհին տրվող Աստծո պատգամի հանդեպ հավատքն ու հավատամքը պահպանելու համար մարտ 21, 2013– էջ 136

(103) Քրիստսի հետ Տառապանքի Գավաթը կիսելու համար
մարտ 22, 2013 – էջ 138

(104) Ազատիր այս հոգին ստրկությունից ապրիլ 14, 2013 – էջ 140

(105)Դարձի գալու ընծան՝ ուրիշների համար ապրիլ 19, 2013 – էջ 141

# Խնդրական աղոթքներ

(1) Պաշտպանություն Կեղծ Մարգարեից օգոստոս 19, 2012 – էջ 144

(2) Իմունիտետի շնորհի համար օգոստոս 24, 2012 – էջ 146

(3) Պաշտպանել Աստծո Խոսքը հոկտեմբեր 11, 2012 – էջ 148
(4) Հայր Աստծո պատիժը մեղմացնելու համար հունվար 12, 2013 – էջ 149
(5) Մահացու մեղքի մեջ գտնվողների փրկության համար
փոտրվար 11, 2013 – էջ 151

Նրանք պետք է իրենց մոտ ունենան Սուրբ Ջուր, Իմ Խաչը և ասեն այս հատուկ խաչակրաց աղոթքը՝ իրենց խաչակրաց աղոթքի խմբի օրհնության և պաշտպանության համար:

Խնդրում եմ ասեք այս խաչակրաց աղոթքը <<Հիսուսը՝ մարդկությանը>> խաչակրաց աղոթախմբի յուրաքանչյուր հանդիպումից առաջ և հետո:

## Ներածական խաչակրաց աղոթք (96)

## *Մեր խաչակրաց աղոթքի խումբն օրհնելու և պաշտպանելու համար*

Ով իմ սիրելի Հիսուս, խնդրում եմ օրհնիր և

պաշտպանիր մեզ՝ Քո խաչակրաց աղոթքի խմբերին, որպեսզի անխոցելի դառնանք սատանայի և բոլոր չար ոգիների չար հարձակումների հանդեպ, որոնք կարող են տանջել մեզ հոգիներ փրկելու այս Սրբազան Առաքելության մեջ:

Թող մենք մնանք հավատարիմ և ուժեղ մինչ համառորեն աշխատում ենք պահել Քո Սուրբ Անունը աշխարհի առջև և երբեք չնահանջել Քո Սուրբ Խոսքը տարածելու մեր պայքարից:

Ամեն:

## *Իմ ընծան Հիսուսին՝ հոգիներ փրկելու համար*

Իմ ամենաթանկագին Հիսուս, Դու, ով մեզ այնքան

շատ է սիրում, թույլ տուր ինձ իմ խոնարհ ձևով օգնել փրկելու Քո թանկագին հոգիներին:

Գթա բոլոր մեղավորներին, անկախ նրանից, թե որքան ծանր են նրանք վիրավորել քեզ:

Թույլ տուր ինձ աղոթքի և տառապանքի միջոցով օգնել այն հոգիներին, որոնք չեն դիմանա Նախազգուշացմանը, որպեսզի տեղ փնտրեն Քո կողքին Քո Թագավորության մեջ: Լսիր իմ աղոթքը, ով քաղցր Հիսուս, օգնելու Քեզ գրավել այն հոգիներին, որոնց դու տենչում ես:

Ով Սուրբ Սիրտ Հիսուսի, ես իմ հավատարմությունն եմ խոստանում Քո Ամենասուրբ Կամքին միշտ:

Ամեն:

## *Աղոթք համաշխարհային ղեկավարների համար*

Ի՛մ Հավիտենական Հայր, հանուն Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի, ես խնդրում եմ, որ Դու պաշտպանես Քո զավակներին այն հալածանքից, որը նյութվում է գլոբալ ուժերի կողմից անմեղ ազգերի դեմ:

Ես աղոթում եմ այն հոգիների մեղքերի թողության համար, ովքեր դժբախտության պատճառն են, որպեսզի նրանք կարողանան շրջվել դեպի Քեզ խոնարհ և ողջացող սրտերով:

Խնդրում եմ տուր քո տառապած զավակներին ուժը՝ դիմանալու համար այդպիսի տառապանքին հանուն աշխարհի մեղքերի քավության Քրիստոսի՝ մեր Տիրոջ միջոցով:

Ամեն:

## *Աշխարհը վախից ազատելու համար*

Ո՜հ, իմ Տեր Հիսուս Քրիստոս, ես աղերսում եմ Քեզ ազատել աշխարհը այն վախից, որը խլում է հոգիներին Քո սիրող Սրտից:

Ես աղոթում եմ, որ հոգիները, ովքեր իրական վախ կզգան Նախազգուշացման ընթացքում, կանգ առնեն և թույլ տան, որ Քո Գթասրտությունը հեղեղի իրենց հոգիները, որպեսզի նրանք ազատ լինեն սիրելու Քեզ այնպես, ինչպես պետք է սիրեն:

Ամեն:

## *Բոլոր ընտանիքների միավորման համար*

Ս իավորիր բոլոր ընտանիքները, Հիսուս,

Նախազգուշացման ժամանակ, որպեսզի նրանք ստանան հավիտենական փրկություն:

Ես աղոթում եմ, որ բոլոր ընտանիքները մնան միասին Քեզ հետ միության մեջ, Հիսուս, որպեսզի նրանք ժառանգեն Երկրի վրա Նոր Դրախտը:

Ամեն:

## *Փառաբանություն Ամենաբարձրյալ Աստծուն*

*Աղջիկս, աշխարհը պետք է առաջարկի այս հատուկ աղոթքը ի գովաբանություն և շնորհակալություն Հայր Աստոծուն այն գթասրտության համար, որը նա ապահովում է ողջ աշխարհին:*

Ո**h**, Հավիտենական Հայր, մենք առաջարկում ենք

Քեզ մեր աղոթքները ուրախ շնորհակալությամբ Քո Գթասրտության թանկագին ընծայի համար՝ ողջ մարդկությանը:

Մենք ուրախանում ենք և առաջարկում ենք Քեզ՝ Ամենափառապանծ Թագավոր, մեր գովաբանությունն ու պաշտամունքը Քո սիրող և քնքուշ գթասրտության համար:

Դու, Ամենաբարձրյալ Աստված, մեր Թագավորն ես, և այս ընծայի համար, որը Դու հիմա բերում ես մեզ, մենք ընկնում ենք Քո ոտքերի առջև խոնարհ ծառայությամբ: Խնդրում ենք, Աստված, գթա Քո բոլոր զավակներին:

Ամեն:

## *Հակաքրիստոսին կանգնեցնելու համար*

Ո՜հ, Հիսուս, ես աղոթում եմ, որ Աստված Իր գթասրտությամբ կարգելի Հակաքրիստոսին և նրա ստոր բանակին Քո զավակներին սարսափի մատնելուց և նրանց վրա դժբախտություններ պարտադրելուց:

Մենք աղոթում ենք, որ նրան կանգնեցնես, և որ երկնային պատժի ձեռքից խուսափենք Նախազգուշացման ժամանակ առաջացած դարձի միջոցով:

Ամեն:

## *Աղոթք նրանց համար, ովքեր մերժում են Գթասրտությունը*

*Սա է այն աղոթքը, որը նրանք պետք է ասեն՝ գթություն խնդրելու համար խավարում գտնվող հոգիների համար:*

Հիսուս, Ես պարտադրում եմ Քեզ, որ ներես այդ

մեղավորներին, որոնց հոգիներն այդքան խավար են, ովքեր կմերժեն Քո գթասրտության լույսը:

Ներիր նրանց, Հիսուս, ես աղերսում եմ Քեզ, որպեսզի ազատագրես նրանց այն մեղքերից, որոնցից նրանք այդքան դժվարանում են դուրս գալ:

Ողողիր նրանց սրտերը Քո գթասրտության ճառագայթներով և թույլ տուր նրանց հնարավորությունը՝ վերադառնալ դեպի Քո հոտը:

Ամեն:

## *Խոստովանությունը*

*Այս աղոթքը պետք է ասվի, հայցելու համար մեղմություն մեղքի թողության համար, Նախազգուշացման ժամանակ և դրանից հետո:*

Թանկագին Հիսուս, ես հայցում եմ Քո

ներողամտությունը իմ բոլոր մեղքերի համար և այն վիրավորանքի ու վերքերի համար, որոնք ես պատճառել եմ ուրիշներին:

Ես խոնարհաբար խնդրում եմ շնորհները, որ խուսափեմ Քեզ կրկին վիրավորելուց և առաջարկեմ քավություն ըստ Քո ամենասուրբ կամքի:

Ես աղերսում եմ ներողամտություն գալիք ցանկացած վիրավորանքի համար, որին ես կմասնակցեմ և որը Քեզ ցավ և տառապանք կպատճառի:

Վերցրու ինձ Քեզ հետ Խաղաղության նոր դարաշրջան, որ ես դառնամ քո ընտանիքի մասը հավիտյան:

Ես սիրում եմ Քեզ Հիսուս:
Ես Քո կարիքն ունեմ:
Ես պատվում եմ Քեզ և այն ամենն ինչ Դու պաշտպանում ես:

Օգնիր ինձ, Հիսուս, որպեսզի ես արժանի դառնամ մտնել Քո Թագավորություն:

Ամեն:

## *Տառապանքի առաջարկումը որպես ընծա*

Ով Հիսուսի Ամենասուրբ Սիրտ,

Սովորեցրու Ինձ ընդունել վիրավորանքները հանուն Քո Սուրբ Անվան, երբ Ես հռչակեմ Քո
խոսքը խոնարհի շնորհակալությամբ:

Սովորեցրու Ինձ հասկանալ, թե ինչպես են խորնարհության ցավն ու տառապանքը ինձ ավելի մոտեցնում Քո Սուրբ Սրտին:

Թույլ տուր ինձ ընդունել այդպիսի փորձությունները սիրով և մեծահոգությամբ, որպեսզի ես ներկայացնեմ դրանք որպես Քեզ համար այնքան թանկարժեք ընծաներ, որ Դու հոգիներ փրկես:

Ամեն:

## *Տանելու համար Քո Սիրո Բոցը*

Օգնիր ինձ, սիրելի Հիսուս, որ անվախորեն

բարձրանամ՝ Քո Անվամբ տանելու համար Քո սիրո բոցը բոլոր ազգերին:

Տուր մեզ, քո զավակներին, զորությունը՝ դիմանալու համար մեղադրանքին, որի դեմ կկանգնենք բոլոր նրանց մեջ, ովքեր Քո գթասրտության ճշմարիտ հավատացողներ չեն:

Ամեն:

## *Տեսանողների հանդեպ ատելությունը դադարեցնելու համար*

Ով Սուրբ Սիրտ Հիսուսի, խնդրում եմ դադարեցրու

այն ատելությունն ու նախանձը, որը գոյություն ունի Քո հետևորդների մեջ այս ժամանակի Քո ճշմարիտ տեսանողների հանդեպ:

Ես աղոթում եմ, որ Դու լսես իմ աղոթքը՝ տալու համար Քո տեսանողներին այն ուժը, որի կարիքը նրանք ունեն՝ հռչակելու համար Քո ամենասուրբ խոսքը չհավատացող աշխարհին:

Ամեն:

## *Աղոթք՝ հպարտության մեղքից խուսափելու համար*

Ո՜հ, Իմ Հիսուս, օգնիր ինձ խուսափել հպարտության

մեղքից, երբ ես խոսում եմ Քո Անվամբ:

Ներիր ինձ, եթե ես երբևէ նվաստացրել եմ որևէ մեկին Քո Սուրբ Անվամբ:

Օգնիր ինձ լսել, Հիսուս, երբ Քո ձայնը խոսում է, և լցրու Ինձ Քո Սուրբ Հոգով, որպեսզի ես կարողանամ զանազանել Քո
խոսքի ճշմարտությունը, երբ Դու կոչ ես անում մարդկությանը:

Ամեն:

## *Աղոթք իմունիտետի համար*

*Իմ հանդիսավոր խոստումն է, զավակներս, որ ձեզնից ով էլ որ կանչի Ինձ Իմ սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի անվամբ՝ փրկելու համար ձեր եղբայրներին ու քույրերին, որ նրանց անմիջապես կտրվի անվարակելիություն: Յուրահատուկ շնորհներ կտրվեն ձեզնից յուրաքանչյուրին, ովքեր կխոստանան **մեկ ամիս** աղոթել նրանց հոգիների համար:*

Ո՜h, Երկնավոր Հայր, Քո սիրելի Որդի Հիսուս

Քրիստոսի սիրո միջոցով, ում տառապանքը խաչի վրա փրկեց մեզ մեղքից,
Խնդրում եմ փրկիր բոլոր նրանց, ովքեր դեռևս մերժում են Նրա Գթասրտության ձեռքը:

Հեղեղիր նրանց հոգիները, սիրելի Հայր, Քո սիրո խորհրդանիշով:

Ես աղերսում եմ Քեզ, Երկնավոր Հայր, լսիր իմ աղոթքը և փրկիր այդ հոգիներին հավիտենական դատապարտումից:

Քո գթասրտությամբ թույլ տուր նրանց առաջինը մտնել Երկրի վրա Խաղաղության Նոր Դարաշրջան:

Ամեն:

## *Աղոթք Հայր Աստծուն՝ միջուկային պատերազմից պաշտպանելու համար*

Ո՜h, Ամենակարող Հայր, Ամենաբարձրյալ Աստված,

Խնդրում եմ գթա բոլոր մեղավորներին

Բաց նրանց սրտերը, որ ընդունեն փրկություն և ստանան լի շնորհներ:

Լսիր իմ աղերսները իմ սեփական ընտանիքի համար և վստահեցրու, որ նրանցից յուրաքանչյուրը բարեհաճություն կգտնի Քո սիրող սրտում:

Ոհ Աստվածային Երկնավոր Հայր, պաշտպանիր քո բոլոր զավակներին երկրի վրա ցանկացած միջուկային պատերազմից կամ այլ գործողություններից, որոնք պլանավորվում են՝ ոչնչացնելու համար Քո զավակներին:

Պահիր մեզ բոլոր վնասից և պաշտպանիր մեզ:

Լուսավորիր մեզ, որ կարողանանք բացել մեր աչքերը՝ լսելու և ընդունելու համար մեր փրկության ճշմարտությունը առանց որևէ վախի մեր հոգիների մեջ:

Ամեն:

## *Շնորհակալություն Աստվածային Գթասրտության Ընծայի համար*

Ո՜հ, Երկնավոր Հայր

Մենք պատվում ենք Քեզ այն զոհաբերության խորը գնահատմամբ, որը դու կատարեցիր երբ աշխարհ ուղարկեցիր Փրկչի,

Մենք առաջարկում ենք Քեզ ուրախությամբ և երախտագիտությամբ մեր աղոթքները՝ խոնարհ շնորհակալությամբ,

Այն ընծայի համար որը Դու հիմա տալիս ես Քո զավակներին՝ Աստվածային Գթասրտության Ընծայի համար,

Ով Ամենաբարձրյալ Աստված, մեզ արժանի դարձրու ընդունելու այդ Մեծ Գթասրտությունը երախտագիտությամբ:

Ամեն:

## *Նախազգուշացման ժամանակ առաջարկվող շնորհներն ընդունելու համար*

Ո՜հ, իմ Հիսուս, ինձ ուժեղ պահիր Քո Մեծ

Գթասրտության այս փորձության ընթացքում:

Տուր ինձ անհրաժեշտ շնորհները, որ փոքր դառնամ Քո աչքում,

Բաց իմ աչքերը Հավիտենական Փրկության Քո խոստումի ճշմարտության հանդեպ,

Ներիր ինձ իմ մեղքերը և ցույց տուր ինձ Քո սերն ու ընկերակցությունը,

Գրկիր ինձ Սուրբ Ընտանիքի բազուկների մեջ, որպեսզի մենք բոլորս կարողանանք նորից մեկ դառնալ,

Ես սիրում եմ քեզ Հիսուս և խոստանում, որ այսօրվանից կհռչակեմ Քո Սուրբ Խոսքը

Առանց վախի իմ սրտում և հոգու մաքրությամբ, հավիտյանս հավիտենից:

Ամեն:

## *Փրկության Մոր աղոթքը խավար հոգիների համար*

Ով Մարիամի Անապական Սիրտ,

Մայր Փրկության և Միջնորդուհի ամեն շնորհի,

Դու, որ կմասնակցես Սատանայի չարությունից

Մարդկության փրկությանը,

Աղոթիր մեզ համար:

Մայր Փրկության, աղոթիր, որ բոլոր հոգիները կարողանան փրկվել

և ընդունել Քո Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի

կողմից ցույց տրվող սերն ու գթասրտությունը, ով մեկ անգամ ևս գալիս է փրկելու

համար մարդկությանը և մեզ հավիտենական փրկության հնարավորությունը տալու:

Ամեն:

## *Հայաքրիստոսին և նրա խումբը կանգնեցնելու համար*

Ո՜հ, սիրելի Հիսուս, փրկիր աշխարհը

Հակաքրիստոսից,

Պաշտպանիր մեզ Սատանայի չար ծուղակներից,

Փրկիր Քո եկեղեցու վերջին մնացորդներին չարից,

Տուր Քո բոլոր եկեղեցիներին անհրաժեշտ զորությունն ու շնորհները՝ պաշտպանելու համար մեզ Սատանայի և նրա տեռորիստների բանակի կողմից նյութված պատերազմներից ու հալածանքներից:

Ամեն:

## *Աղոթք երիտասարդների համար*

Ամայր Փրկության, ես խնդրում եմ Քեզ աղոթել

գթասրտության համար

Դեպի երիտասարդ հոգիները, ովքեր սարսափելի խավարի մեջ են, որպեսզի նրանք ճանաչեն Քո սիրելի Որդուն, երբ Նա գա ազատելու համար ողջ մարդկությանը:

Թող ոչ մի հոգի չընկնի ճանապարհից դուրս:

Թող ոչ մի հոգի չմերժի Նրա Մեծ Գթասրտությունը:

Ես աղոթում եմ, Մայր, որ բոլորը փրկվեն, և խնդրում եմ Քեզ ծածկել այդ հոգիներին Քո Սուրբ Թիկնոցով

Ապահովելու համար նրանց այն պաշտպանությունը խաբեբայից, որի կարիքը նրանք ունեն:

Ամեն:

## *Կանգնեցնել Հակաքրիստոսին աշխարհը ոչնչացնելուց*

Ո՜h, Հայր Աստված, Քո թանկագին Որդու անվամբ

Ես կանչում եմ քեզ՝ արգելելու Հակաքրիստոսին Քո զավակների սրտերը թակարդի մեջ գցելուց:

Ես խնդրում եմ քեզ, Ամենակարող Հայր, կանգնեցնել նրան Քո զավակների հանդեպ սարսափ պարտադրելուց:

Ես խնդրում եմ Քեզ կանգնեցնել նրան քո արարչությանը թունավորելուց և խնդրում եմ Քեզ գթասրտություն ցույց տալ այն խեղճ հոգիներին, ովքեր անօգնական կլինեն նրա հանդեպ:

Լսիր իմ աղոթքը, սիրելի Հայր, և փրկիր Քո բոլոր զավակներին այդ սոսկալի չարիքից:

Ամեն:

## *Շնորհակալություն Հայր Աստծուն մարդկության փրկության համար*

Մենք գովաբանում ենք Քեզ և շնորհակալություն

հայտնում Քեզ,

Ով Սուրբ Աստված, մարդկության ամենակարող Արարիչ, այն սիրո և կարեկցանքի համար, որը Դու ունես մարդկության հանդեպ,

Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ փրկության ընծայի համար, որը դու հեղում ես Քո խեղճ զավակների վրա,

Մենք աղերսում ենք Քեզ, ով Տեր, որ փրկես բոլոր նրանց, ովքեր հետևում են չարին,

և որ նրանց սրտերը բացվեն հավիտենական կյանքի ճշմարտության հանդեպ:

Ամեն:

## *Որպեսզի հոգևորականները պահեն եկեղեցու ուսուցումները*

***Ես տալիս եմ աշխարհին այս խաչակրաց աղոթքը, որ կաթոլիկ հոգևորականներն ասեն:***

Ո հ Իմ սիրելի Հիսուս, Ուժեղ պահիր ինձ և Քո

հանդեպ իմ ունեցած սիրո բոցը՝ վառ օրվա յուրաքանչյուր պահի:

Երբեք թույլ մի տուր, որ Քո հանդեպ եղած սիրո բոցը երերա կամ հանգչի: Երբեք թույլ մի տուր ինձ թուլանալ գայթակղության ներկայությամբ:

Տուր ինձ շնորհները, որոնք անհրաժեշտ են պատվելու համար իմ կոչումը, իմ նվիրվածությունը, իմ հավատարմությունը,Եվ վեր պահելու Ուղղափառ Կաթոլիկ Եկեղեցու ուսուցումները:

Ես առաջարկում եմ Քեզ իմ հավատարմությունը միշտ: Ես իմ նվիրաբերումն եմ երաշխավորում կռվելու Քո բանակում, որպեսզի Կաթոլիկ Եկեղեցին կարողանա նորից բարձրանալ փառքով՝ ողջունելու Քեզ սիրելի Հիսուս, երբ Դու նորից գաս:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 23

## *Աղոթք Բենեդիկտ Պապի անվտանգության համար*

Ո՜հ Իմ Հավիտենական Հայր, հանուն Քո սիրելի

Որդի Հիսուս Քրիստոսի և այն տառապանքի, որը Նա կրեց աշխարհը մեղքից փրկելու համար, ես հիմա աղոթում եմ, որ Դու պաշտպանես Քո Սուրբ Երեց Բենեդիկտ Պապին՝ երկրի վրա Քո Եկեղեցու գլխավորին, որպեսզի նա նույնպես կարողանա օգնել փրկելու Քո զավակներին և սրբազան սպասավորներին Սատանայի մտրակից և ընկած հրեշտակների իշխանությունից, ովքեր քայլում են երկրի վրա՝ հոգիներ գողանալով:

Ով Հայր, պաշտպանիր Քո Պապին, որպեսզի Քո զավակները կարողանան առաջնորդություն ստանալ դեպի Քո Նոր Դրախտը երկրի վրա:

Ամեն:

## *Լիակատար ինդուլգենցիա մեղքերի բացարձակ թողության համար*

***(ոչ կաթոլիկների և կաթոլիկների համար – կաթոլիկները պետք է շարունակեն կանոնավոր կերպով գնալ Խոստովանության, ինչպես Հիսուսն է խնդրում)***

***Նրանք պետք է ասեն այս աղոթքը յոթ օր շարունակ, և նրանց կտրվի մեղքերի բացարձակ թողության ընծան և Սուրբ Հոգու զորությունը:***

Ով Իմ Հիսուս, Դու երկրի Լույսն ես: Դու այն բոցն ես, որ դիպչում է բոլոր հոգիներին: Քո գթասրտությունն ու սերը սահման չեն ճանաչում:

ՄԵՆՔ արժանի չենք այն զոհաբերությանը, որը Դու կատարեցիր խաչի վրա, սակայն գիտենք, որ մեր հանդեպ Քո սերն ավելի մեծ է, քան այն սերը որը մենք ունենք Քո հանդեպ:

Տուր մեզ, ով Տեր, խոնարհության ընծան, որ արժանի լինենք Քո Նոր Թագավորությանը: Լցրու մեզ Սուրբ Հոգով, որ կարողանանք առաջ գնալ և առաջնորդել Քո բանակը Քո Սուրբ Խոսքի ճշմարտությունը հռչակելու և մեր եղբայրներին ու քույրերին նախապատրաստելու համար, Երկիր վրա Քո Երկրորդ Գալուստի փառքի համար:

Մենք պատվում ենք Քեզ: Մենք գովաբանում են Քեզ:

Մենք առաջարկում ենք մեր անձը, մեր վշտերը, մեր տառապանքները՝ որպես ընծա Քեզ, հոգիներ փրկելու համար:

ՄԵնք սիրում ենք Քեզ, Հիսուս:

Գթա Քո բոլոր զավակներին, որտեղ էլ որ նրանք լինեն:

Ամեն:

## *Տեսանողների պաշտպանության համար ամբողջ աշխարհում*

Ով Ամենաբարձրյալ Աստված,

Ես աղերսում եմ Քեզ՝ պաշտպանություն առաջարկելու աշխարհում Քո բոլոր սուրբ պատգամատարներին: Ես աղոթում եմ, որ նրանք պաշտպանված լինեն ուրիշների ատելությունից:

Ես խնդրում եմ, որ Քո Ամենասուրբ Խոսքն արագորեն տարածվի ողջ աշխարհում:

Պաշտպանիր Քո պատգամատարներին զրպարտությունից, վիրավորանքից, ստերից և ամեն տեսակ վտանգներից:

Պաշտպանիր նրանց ընտանիքները և ծածկիր նրանց միշտ Սուրբ Հոգով, որպեսզի աշխարհին տրվող պատգամներին ուշ դարձնեն զոջացող և խոնարհ սրտերով:

Ամեն:

## *Աղոթեք Վարդարանը, որպեսզի օգնեք փրկել ձեր ազգը*

*Տիրամայրը կոչ է անում մարդկանց աղոթելու Իր Սուրբ Վարդարանը, որպեսզի օգնեն փրկել իրենց ազգը:*

**Աղոթք Վարդարանից առաջ.**

Ով Սուրբ Վարդարանի Թագուհի, դու

բարեհաճեցիր գալ Ֆաթիմա՝ բացահայտելու երեք հովիվ երեխաներին Վարդարանում թաքնված Շնորհի գանձերը:

Ողջունում իմ սիրտը մի անկեղծ սիրով այդ պաշտամունքի հանդեպ, որպեսզի մեր Ազատագրման Առեղծվածների մասին մտածելով, որոնք նշվում են այդտեղ, ես հարստանամ նրա պտուղներով և խաղաղություն ձեռք բերեմ աշխարհի ու Ռուսաստանի համար, նաև այն Շնորհները, որոնք ես խնդրում եմ Քեզնից այս Վարդարանով: (Այստեղ նշեք ձեր խնդրանքը):

Ես խնդրում եմ սա Աստծո գերագույն Փառքի համար, քո պատվի համար և հոգիների բարօրության համար, հատկապես՝ իմ սեփական հոգու:

Ամեն:

*Կույս Մարիամի Վարդարանը (տես հղումը)*

http://www.thewarningsecondcoming.com/how-to-pray/how-to-pray-the-rosary

## Խաչակրաց աղոթք 27

### *Աղոթք՝ աշխարհի խաղաղության համար*

Ով Իմ Հիսուս Ես գթասրտություն եմ աղերսում

Նրանց համար, ովքեր չարչարված են սարսափելի պատերազմներից:

Ես խնդրում եմ, որ խաղաղություն ներարկվի այդ տառապած ազգերի մեջ,

Ովքեր կույր են Քո գոյության ճշմարտության հանդեպ:

Խնդրում եմ, ծածկիր այդ ազգերին Քո Սուրբ Հոգու զորությամբ, որպեսզի նրանք

Դադարեցնեն իրենց իշխանությունն օգտագործել՝ հալածելու համար անմեղ հոգիներին:

Գթա Քո բոլոր երկրներին, որոնք անօգնական են այն չար վայրագությունների դեմ,

Որոնք ծածկում են ողջ աշխարհը:

Ամեն:

## *Կույս Մարիամ. Աղոթք բոլոր քրիստոնյա եկեղեցիների միավորման համար*

Ով Ամենաբարձրյալ Աստված, մենք ծնկի ենք գալիս

Քո առջև՝ խնդրելու համար Քո բոլոր զավակների միասնությունը երկրի վրա Քո քրիստոնեական եկեղեցիները միավորելու պայքարում:

Թող մեր տարբերությունները չբաժանեն մեզ աշխարհում հավատի մեծ ուրացության այս ժամանակ:

Քո հանդեպ մեր սիրով, սիրելի Հայր, մենք խնդրում ենք Քեզ տալ մեզ շնորհները՝ սիրելու համար միմյանց հանուն Քո Սիրելի Որդի՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի:

Մենք պաշտում ենք Քեզ: Մենք սիրում ենք Քեզ: Մենք միավորվում ենք մարտնչելու զորության համար, որ պահպանենք Քո քրիստոնեական եկեղեցիները երկրի վրա այն փորձություններից, որոնց կդիմակայենք գալիք տարիներին:

Ամեն:

## *Պաշտպանելու համար քրիստոնեությունը*

Ով իմ Տեր Հիսուս Քրիստոս,

Ես խնդրում եմ Քեզ դուրս հեղել Քո Սուրբ Հոգին

Քո բոլոր զավակների վրա:

Ես խնդրում եմ Քեզ ներել բոլոր նրանց, ովքեր իրենց հոգիներում ատելություն ունեն Քո հանդեպ:

Ես աղոթում եմ որ Քո Մեծ Գթասրտության ժամանակ աթեիստները բացեն իրենց կարծրացած սրտերը,

Եվ Քո զավակները, ովքեր սիրում են Քեզ, կարողանան պատվել Քեզ արժանապատվորեն՝ բարձրանալով ամեն տեսակի հալածանքներից վեր:

Խնդրում եմ, լից Քո բոլոր զավակներին Քո Հոգու ընծայով, որպեսզի նրանք կարողանան բարձրանալ

քաջությամբ, և առաջնորդեն Քո բանակը սատանայի, նրա դևերի և բոլոր այն հոգիների դեմ, ովքեր նրա (սատանայի) կեղծ խոստումների ստրուկներն են:

Ամեն:

## *Հայր Աստված. Աղոթք պատերազմից, սովից և կրոնական հալածանքից խուսափելու համար*

Ով Իմ Հավիտենական Հայր, Աստված՝ Արարիչ

Տիեզերքի, հանուն Քո թանկագին Որդու ես խնդրում եմ Քեզ, դարձրու մեզ, որ Քեզ ավելի շատ սիրենք:

Օգնիր մեզ լինել քաջ, անվախ և ուժեղ հակառակորդի դեմ: Ընդունիր մեր զոհաբերությունները, տառապանքները և փորձությունները որպես ընծա Քո գահի առաջ՝ փրկելու համար Քո զավակներին երկրի վրա:

Մեղմացրու անմաքուր հոգիների սրտերը: Բաց արա նրանց աչքերը Քո սիրո ճշմարտության հանդեպ, որպեսզի նրանք կարողանան միանալ Քո բոլոր զավակների հետ միասին երկրի վրա Դրախտի մեջ, որը դու սիրով ստեղծել ես մեզ համար ըստ Քո Աստվածային Կամքի:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 31

### *Աղոթքի պաշտպանության շղթա*

Ով Իմ Հիսուս,

Թող իմ աղոթքը կանչի Քո Սուրբ Հոգուն իջնելու այն առաջնորդների վրա, ովքեր տարված են ագահությամբ, հպարտությամբ, մեծամտությամբ, որ դադարեցնեն հալածանքը Քո անմեղ զավակների հանդեպ:

Ես խնդրում եմ Քեզ, որ կանգնեցնես աղքատության, սովի և պատերազմների հարձակումը Քո զավակների վրա: Եվ ես աղոթում եմ, որ Եվրոպական առաջնորդները բացեն իրենց սրտերը Քո սիրո ճշմարտության հանդեպ:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 32

## *Իռլանդիայում աբորտը կասեցնելու համար*

Ով Մայր Փրկության, աղոթիր Իռլանդիայի Քո զավակների համար՝ արգելելու համար, որ աբորտի չար գործողությունը չպարտադրվի մեզ:

Պաշտպանիր այս սուրբ ազգին հուսահատության մեջ ավելի խորը ընկղմվելուց, այն խավարից, որը ծածկում է մեր երկիրը:

Ազատիր մեզ չարից, ով ցանկանում է ոչնչացնել Քո դեռևս չծնված զավակներին:

Աղոթիր, որ այդ առաջնորդներն ունենան քաջությունը՝ լսելու նրանց, ովքեր սիրում են Քո Որդուն, որպեսզի նրանք հետևեն մեր Տեր Հիսուս Քրիստոսի ուսուցումներին:

Ամեն:

## *Իմ Կնիքը ճանաչելու և այն սիրով ու երախտագիտությամբ ընդունելու համար*

*Հայր Աստված խնդրում է, որպեզի բոլորն ընդունեն այս կնիքը որպես պաշտպանություն մեզանից յուրաքանչյուրի, մեր ընտանիքների համար գալիք դժվարին ժամանակների համար, որ պետք է ապրենք:*

Ով Աստված իմ, Իմ սիրող Հայր, ես սիրով և երախտագիտությամբ ընդունում եմ Քո Աստվածային Պաշտպանության Կնիքը:

Քո Աստվածայնությունը ներառում է իմ մարմինն ու հոգին հավերժությունը:

Ես խոնարհվում եմ խոնարհի շնորհակալությամբ և առաջարկում Քեզ իմ խորը սերն ու հավատարմությունը Քեզ՝ իմ Սիրելի Հայր:

Ես խնդրում եմ Քեզ պաշտպանել ինձ և իմ սիրելիներին այդ հատուկ Կնիքով և ես իմ կյանքն եմ նվիրում Քո ծառայությանն ընդմիշտ:

Ես սիրում եմ Քեզ սիրելի Հայր:

Ես սփոփում եմ Քեզ այս ժամանակներում սիրելի Հայր:

Ես առաջարկում եմ Քեզ Քո սիրելի Որդու Մարմինը, Արյունը, Հոգին և Աստվածայնությունը աշխարհի

մեղքերի քավության և Քո բոլոր զավակների փրկության համար:

Ամեն:

## *Պահեցողություն Պահքի շրջանում*

Ով իմ Հիսուս, օգնիր ինձ իմ փոքր ձևով

ընդօրինակել զոհաբերության Քո կյանքը՝ մարդկությանը փրկելու համար:

Թույլ տուր ինձ առաջարկել Քեզ պահեցողության իմ ընծան շաբաթական մեկ օր Պահքի շրջանում, փրկելու համար ողջ մարդկությանը, որպեսզի նրանք կարողանան ներս մտնել Երկրի վրա Նոր Դրախտի դարպասներից:

Ես առաջարկում եմ Քեզ, սիրելի Հիսուս, իմ զոհաբերությունը սիրով և ուրախությամբ իմ սրտում:

Քեզ ցույց տալու համար իմ սիրո չափը այս զոհաբերության միջոցով ես խնդրում եմ Քեզնից ամեն մի հոգու փրկությունը, ով կարող է շնորհի վիճակից ընկած լինել:

Ամեն:

## *Աղոթք՝ հոգիների դրախտ մտնելու համար*

Ով իմ Հիսուս, օգնիր ինձ՝ օգնելու Քեզ փրկել երկրի վրա քո զավակների մնացորդին: Ես աղոթում եմ, որ Դու քո գթասրտությամբ կփրկես հոգիներին խավարի ոգուց:

Ընդունիր այս կյանքում իմ փորձությունները, տառապանքն ու վշտերը՝ դժոխքի կրակներից հոգիներ փրկելու համար:

Լցրու ինձ շնորհներով, որ առաջարկեմ Քեզ այդ տառապանքները սիրով և ուրախությամբ իմ սրտում, այնպես որ մենք բոլորս միավորվենք որպես մեկ՝ Օրհնյալ Երրորդության հանդեպ սիրո մեջ, և ապրենք քեզ հետ Դրախտում՝ որպես մեկ սուրբ ընտանիք:

Ամեն:

## *Նրանց համար, ովքեր ճշմարիտ Աստծուն պատվելու համար օգնության կարիք ունեն*

Հիսուս օգնիր ինձ, քանի որ ես կորած եմ և շփոթված:

Ես չգիտեմ մահից հետո կյանքի մասին ճշմարտությունը:

Ներիր ինձ, եթե ես վիրավորում եմ Քեզ՝ պատվելով կեղծ աստվածների, որոնք ճշմարիտ Աստվածը չեն:

Փրկիր ինձ և օգնիր ինձ տեսնել ճշմարտությունը պարզությամբ և փրկիր ինձ իմ հոգու խավարից:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 37

### *Աստծո բոլոր զավակների միավորման համար*

Ով սիրելի Հիսուս,Միավորիր սիրո մեջ Քո բոլոր

սիրելի հետևորդներին, որպեսզի մենք կարողանանք տարածել հավիտենական փրկության մասին Քո խոստման ճշմարությունը աշխարհով մեկ:

Մենք աղոթում ենք, որ գաղջ հոգիները, ովքեր վախենում են քեզ առաջարկել իրենց միտքը, մարմինն ու հոգին, ցած գցեն հպարտության իրենց զենքը և բացեն իրենց սրտերը Քո սիրո առջև, ու կդառնան երկրի վրա Քո ընտանիքի մի մասը:

Գրկիր այդ բոլոր կորած հոգիներին, սիրելի Հիսուս, և թույլ տուր որ մեր սերը , որպես նրանց եղբայրներ և քույրեր, վեր բարձրացնի նրանց անապատից և մեզ հետ միասին տանի դեպի Սուրբ Երրորդության գիրկը, սերը և լույսը:

Մենք դնում ենք մեր ողջ հույսը, վստահությունը և սերը Քո Սուրբ Ձեռքերի մեջ:

Մենք խնդրում ենք Քեզ տարածել մեր պաշտամունքը, որպեսզի կարողանանք օգնել՝ հոգիներ փրկելու:

Ամեն:

## *Փրկության աղոթք կաթոլիկ եկեղեցու համար*

Ով Օրհնյալ Մայր Փրկության, խնդրում եմ, աղոթիր

կաթոլիկ եկեղեցու համար այս դժվարին ժամանակներում, և մեր սիրելի Բենեդիկտ XVI Պապի համար՝ թեթևացնելու նրա տառապանքը:

Մենք խնդրում ենք Քեզ, Մայր Փրկության, որ ծածկես Աստծո Սրբազան սպասավորներին Քո Սուրբ Թիկնոցով, որպեսզի նրանց տրվի ուժեղ, հավատարիմ և քաջ լինելու շնորհները այն փորձությունների ընթացքում, որոնց կդիմակայեն:

Աղոթիր նաև, որ նրանք հոգ տանեն իրենց հոտին Կաթոլիկ Եկեղեցու ճշմարիտ ուսուցումներին համապատասխան:

Ով Աստծո Սուրբ Մայր, տուր մեզ՝ երկրի վրա քո մնացորդ եկեղեցուն, առաջնորդության ընծան, որպեսզի մենք կարողանանք առաջնորդել հոգիներ փրկելու դեպի Քո Որդու Թագավորություն:

Մենք խնդրում ենք Քեզ, Մայր Փրկության, որ հեռու պահես խաբեբային Քո Որդու հետևորդներից, որ

նրանց որոնումների մեջ պահես նրանց հոգիները,
որպեսզի նրանք հարմար լինեն ներս մտնելու
երկրի վրա Նոր Դրախտի դարպասներից:

Ամեն:

## *Օգնել հոգիներին Նոր Դրախտի համար նախապատրաստվելու*

Ով Հիսուս, իմ սիրելի Փրկիչ, ես խնդրում եմ, որ

ծածկես ինձ Քո Սուրբ Հոգով, որպեսզի կարողանամ իշխանությամբ խոսել Քո Ամենասուրբ Խոսքը՝ նախապատրաստելու համար Աստծո բոլոր զավակներին Քո Երկրորդ Գալուստին:

Ես խնդրում եմ Քեզնից, Տեր Հիսուս, այն բոլոր շնորհները որոնց կարիքն ունեմ՝ հասնելու համար բոլոր հավատներին, հավատամքներին և ազգություններին, ուր էլ որ գնամ:

Օգնիր ինձ խոսել Քո լեզվով, սփոփել խեղճ հոգիներին Քո շուրթերով, և բոլոր հոգիներին սիրել այն յուրահատուկ աստվածային սիրով, որը դուրս է հեղվում Քո Սուրբ Սրտից:

Օգնիր ինձ փրկել հոգիների՝ այնքան մոտիկ քո սրտին և թույլ տուր ինձ սփոփել Քեզ, սիրելի Հիսուս երբ կորած հոգիները շարունակեն մերժել Քո գթասրտությունը:

Հիսուս, ես ոչինչ եմ առանց Քեզ, բայց քո առատաձեռն օգնությամբ ես կկռվեմ քո անվամբ՝ օգնելու համար փրկել ողջ մարդկությանը:

Ամեն:

## *Հոգևորականների համար. Նախապատրաստել հոգիներին Երկրորդ Գալուստի համար*

Ով իմ Հիսուս, ես մի խոնարհ ծառա եմ և կարիք

ունեմ, որ Դու առաաջնորդես ինձ, որպեսզի ես կարողանամ նախապատրաստել հոգիներին Քո Երկրորդ Գալուստին:

Օգնիր ինձ դարձի բերելու հոգիների և նախապատարստելու նրանց ըստ Քո Սուրբ Կամքի, որպեսզի նրանք հարմար լինեն մտնելու Նոր Երկինք և Երկիր, որ Դու խոստացար ողջ մարդկությանը՝ խաչի վրա Քո մահվան միջոցով:

Տուր ինձ շնորհները, որոնց կարիքն ունեմ, որպեսզի կարողանամ հասցնել Քո խոսքը ծարավ հոգիներին, և երբեք չտատանվեմ Քո հանդեպ իմ պարտականության մեջ, սիրելի Հիսուս, ում ես Իմ հավատարմությունն եմ հայտնում իմ սրբազան երդումների միջոցով:

Ամեն:

## *Չհավատացողների հոգիների համար*

Ով իմ Հիսուս, օգնիր Քո զավակներին, ովքեր կույր են փրկության Քո խոստումի հանդեպ:

Ես խնդրում եմ Քեզ, որ իմ աղոթքների և տառապանքի օգնությամբ բացես չհավատացողների աչքերը, որպեսզի նրանք կարողանան տեսնել Քո քնքուշ սերը և վազեն Քո սուրբ բազուկների մեջ պաշտպանության համար:

Օգնիր նրանց տեսնել ճշմարտությունը և թողություն փնտրել իրենց բոլոր մեղքերի համար, որպեսզի կարողանան փրկվել և առաջինը լինել մտնելու Նոր Դրախտի դարպասներից:

Ես աղոթում եմ այդ խեղճ հոգիների համար, ներառյալ տղամարդկանց, կանանց և երեխաների, և կոչ եմ անում Քեզ, որ թողություն տաս նրանց մեղքերին:

Ամեն:

## *Պահեցողության աղոթք՝ կասեցնելու համար համաշխարհային մեկ արժույթը*

Ով Ամենաբարձյալ Աստված, ես առաջարկում

եմ Քեզ իմ պահեցողության ընծան, որպեսզի Դու կասեցնես չարի ճանկը աշխարհում, որ պլանավորում է սովամահ անել իմ երկիրը սննդից, ներառյալ՝ Կյանքի Հացից:

Ընդունիր իմ առաջարկը և լսիր իմ աղերսները ուրիշ ազգերի համար, կանխելու համար նրանց տառապանքը, որը պլանավորվել է հակաքրիստոսի կողմից:

Փրկիր մեզ, սիրելի Տեր, չարությունից և պաշտպանիր մեր հավատը, որպեսզի մենք կարողանանք պատվել Քեզ այն ազատության միջոցով, որի կարիքն ունենք Քեզ սիրելու և երկրպագելու համար հավիտյանս հավիտենից:

Ամեն:

## *Նախազգուշացման ընթացքում հոգիներ փրկելու համար*

Ով Աստված Ամենակարող Հայր,

Քո Սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի անունից,
և մեր մեղքերի փրկության համար խաչի վրա Նրա մահվան հիշատակը նշելու համար,
ես խնդրում եմ Քեզ փրկել այն հոգիներին, ովքեր չեն կարող փրկել իրենք իրենց,
և ովքեր կարող են մեռնել մահացու մեղքի մեջ Նախազգուշացման ընթացքում:

Քո սիրելի Որդու տառապանքներին ի հատուցում,
Ես կոչ եմ անում Քեզ ներել նրանց, ովքեր չեն կարող Թողություն փնտրել, որովհետև չեն ապրի այնքան, որ խնդրեն
Հիսուսին՝ Քո Որդուն, ազատել իրենց մեղքից:

Ամեն:

## *Ուժ՝ իմ հավատը Կեղծ Մարգարեից պաշտպանելու համար*

Ս իրելի Հիսուս, տուր ինձ զորությունը՝

կենտրոնանալու Քո ուսուցումների վրա
և միշտ հռչակելու Քո Սուրբ Խոսքը:

Երբեք թույլ մի տուր ինձ գայթակղվել՝ կռապաշտելու կեղծ մարգարեին, ով կփորձի իրեն ներկայացնել որպես Դու:

Ուժեղ պահիր Քո հանդեպ իմ սերը:

Տուր ինձ զանազանության շնորհները, որպեսզի ես երբեք չժխտեմ Սուրբ Աստվածաշնչում գտնվող ճշմարտությունը անկախ նրանից, թե որքան Ստեր կներկայացվեն ինձ՝ խրախուսելու համար, որ մեջքս շրջեմ Քո Սուրբ Խոսքի հանդեպ:

Ամեն:

## *Աղոթք բացասական մտքերը հաղթահարելու համար*

Ո՜հ Հիսուս, ես շատ քիչ գիտեմ Քո մասին:

Բայց խնդրում եմ օգնիր ինձ բացել սիրտս՝ թույլ տալու համար Քեզ գալ իմ հոգու մեջ, որպեսզի կարողանաս բուժել ինձ, սփոփել ինձ և լցնել ինձ Քո խաղաղությամբ:

Օգնիր ինձ ուրախություն զգալ, հաղթել բոլոր բացասական մտքերը, և սովորել հասկանալու, թե ինչպես Քեզ հաճելի լինել, որպեսզի կարողանամ մտնել Քո Նոր Դրախտը, ուր կարող եմ ապրել սիրո, ուրախության և հրաշքի կյանքով Քեզ հետ հավիտյան:

Ամեն:

## *Ազատիր ինձ Սատանայի շղթաներից*

Ով Հիսուս, ես կորած եմ: Ես շփոթված եմ և

բանտարկյալի պես եմ ինձ զգում
որ ընկել է մի ցանցի մեջ, որից չի կարող ազատվել:
Ես վստահում եմ Քեզ Հիսուս, որ կգաս ինձ օգնության
և կազատես ինձ սատանայի ու նրա չարքերի շղթաներից:

Օգնիր ինձ, քանի որ ես կորած եմ: Ես Քո սիրո կարիքն ունեմ, որ ինձ ուժ տա հավատալու Քեզ և վստահելու Քեզ, որպեսզի կարողանամ փրկվել այս չարիքից, և ինձ ցույց տրվի լույսը, որ կարողանամ գտնել խաղաղություն, սեր և երջանկություն վերջապես:

Ամեն:

## *Վերավառիր քո սերը Հիսուսի հանդեպ*

Ո՜h Օրհնյալ Մայր, Մայր Փրկության ողջ աշխարհի համար, աղոթիր, որ Հիսուսի հանդեպ իմ սերը վերավառվի:

Օգնիր ինձ զգալ Նրա սիրո բոցը, որպեսզի այն լցնի իմ հոգին:

Օգնիր ինձ սիրել Հիսուսին ավելի շատ: Աղոթիր, որ Նրա հանդեպ ունեցած իմ հավատը, սերը և նվիրվածությունը ավելի ուժեղ դառնան:

Ամոքիր կասկածները, որոնք տանջում են ինձ, և օգնիր ինձ պարզորեն տեսնել Ճշմարտության Աստվածային Լույսը, որը ճառագում է Քո Սիրելի Որդուց՝ ողջ մարդկության Փրկչից:

Ամեն:

## *Աղոթք Քրիստոսի Երկրորդ Գալուստը հայտարարելու շնորհի համար*

Ո՜հ իմ Հիսուս, տուր ինձ շնորհը, որ հռչակեմ Քո

Սուրբ Խոսքը ողջ մարդկությանը, որպեսզի հոգիները կարողանան փրկվել:

Հեղիր Քո Սուրբ Հոգին ինձ վրա՝ Քո խոնարհ ծառայի, որպեսզի Քո Սուրբ Խոսքը լսվի և ընդունվի հատկապես այն հոգիների կողմից, ովքեր ամենից շատ Քո գթասրտության կարիքն ունեն:

Օգնիր ինձ պատվել Քո Սուրբ Կամքը միշտ, և երբեք չվիրավորել կամ չարհամարհել նրանց, ովքեր մերժում են Քո Գթասրտության ձեռքը:

Ամեն:

## *Հավատարմության երդում քրիստոնյա հոգևորականների համար*

Ո՜հ Հիսուս, ես Քո խոնարհ ծառան եմ և ես տալիս եմ

իմ հավատարմության և նվիրվածության երդումը Քեզ:

Ես խնդրում եմ Քեզ տալ մի նշան Քո Կանչի մասին:
Օգնիր ինձ բացել աչքերս և տեսնել Քո խոստումը:

Օրհնիր ինձ Սուրբ Հոգու շնորհով,
որ չխաբվեմ նրանց կողմից, ովքեր հայտարարում են թե գալիս են Քո անունից, բայց չեն խոսում ճշմարտությունը:
Ցույց տուր ինձ ճշմարտությունը:

Թույլ տուր ինձ զգալ Քո սերը,
որ կարողանամ կատարել Քո Ամենասուրբ Կամքը:
Ես խնդրում եմ Քեզ խոնարհ սրտով, որ ինձ ցույց տաս ճանապարհը,
թե ինչպես կարող եմ ես օգնել Քեզ փրկելու մարդկության հոգիները:
Ամեն:

## *Հիսուս, օգնիր ինձ ճանաչել, թե ով ես Դու*

Ո՜հ սիրելի Հիսուս, օգնիր Ինձ ճանաչել, թե ով ես

Դու:

Ներիր ինձ մինչ այժմ ՔԵզ հետ չխոսելուս համար:

Օգնիր ինձ խաղաղություն գտնել այս կյանքում, և որ ինձ ցույց տրվի հավիտենական կյանքի ճշմարտությունը:

Հանգստացրու հոգիս, թեթևացրու մտահոգություններս, տուր ինձ խաղաղություն, բաց արա իմ սիրտը հիմա, որպեսզի կարողանաս լցնել հոգիս Քո սիրով:

Ամեն:

## *Սուրբ Հոգու Ընծայի համար*

Օ, արի Սուրբ Հոգի, հեղիր Սիրո, Իմաստության և

Գիտելիքի Քո Ընծան իմ խոնարհ հոգու վրա:

Լցրու ինձ Ճշմարատության Լույսով, որպեսզի կարողանամ զանազանել Աստծո Ճշմարտությունը Սատանայի և նրա հրեշտակների կողմից տարածած ստերից:

Օգնիր ինձ բռնել ջահը և տարածել հասկացողության բոցը բոլոր նրանց, ում կհանդիպեմ, Մեր Տեր Քրիստոսի միջոցով:

Ամեն:

## *Աղոթք՝ Հորը*

Ի մ սիրելի Հայր, հանուն Քո թանկագին Որդու,

և ի հիշատակ Խաչի վրա Նրա կրած Տառապանքի
ես կանչում եմ Քեզ:

Դու, Ամենաբարձրյալ Աստված, Արարիչ աշխարհի և գոյություն ունեցող ամեն բանի, պահիր մեր փրկությունը Քո Սուրբ Ձեռքերի մեջ:

Գրկիր Քո բոլոր զավակներին, ներառյալ նրանց, ովքեր չեն ճանաչում Քեզ, և նրանց, ովքեր ճանաչում են, բայց նայում են այլ ուղղությամբ:

Ներիր մեզ մեր մեղքը և փրկիր մեզ Սատանայի ու նրա բանակի հալածանքից:

Վերցրու մեզ Քո բազուկների մեջ և լցրու մեզ հույսով, որի կարիքն ունենք տեսնելու համար ճշմարտության ուղին:

Ամեն:

## *Աղոթք կաթոլիկ եկեղեցու համար*

Ով Հայր Աստված, հանուն Քո Սիրելի Որդու, ես

աղերսում եմ Քեզ՝ տալ անհրաժեշտ ուժն ու շնորհները օգնելու համար քահանաներին, որ դիմանան այն հալածանքին, որը կրում են:

Օգնիր նրանց, որ մնան Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի ուսուցումների ճշմարտության մեջ և երբեք տեղի չտան, չթուլանան կամ չենթարկվեն Սուրբ Հաղորդության գոյության վերաբերյալ ոչ ճշմարտություններին:

Ամեն:

## *Աղոթք՝ Հորը, թուլացնելու համար երրորդ համաշխարհային պատերազմի ազդեցությունը*

Ով Երկնավոր Հայր, հանուն Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի, Ով մեծապես տառապեց մարդկության մեղքերի համար, խնդրում եմ, օգնիր մեզ այս դժվարին ժամանակներում, որին դիմակայում ենք:

Օգնիր մեզ դիմանալ այն հալածանքին, որը պլանավորվում է ագահ ղեկավարների և նրանց կողմից, ովքեր ցանկանում են ոչնչացնել Քո եկեղեցիներն ու Քո զավակներին:

Մենք աղերսում ենք Քեզ, սիրելի Հայր, օգնել մեզ կերակրելու մեր ընտանիքները և փրկելու նրանց կյանքը, ովքեր կպարտադրվեն պատերզամի իրենց կամքին հակառակ:

Մենք սիրում ենք Քեզ՝ սիրելի Հայր: Մենք խնդրում ենք Քեզ օգնել մեզ կարիքի ժամանակ: Փրկիր մեզ հակաքրիստոսի ճանկից: Օգնիր մեզ դիմադրելու այդ նշանին՝ գազանի նշանին, այն ընդունելը մերժելու միջոցով:

Օգնիր նրանց, ովքեր սիրում են Քեզ , որ հավատարիմ մնան Քո Սուրբ Խոսքին միշտ, որպեսզի Դու կարողանաս

հեղել մեզ վրա շնորհները՝ գոյատևելու Մարմնով և Հոգով:

Ամեն:

## *Նախազգուշացմանը նախապատրաստվելու համար*

Ով Իմ սիրելի Հիսուս,

Խնդրում եմ բաց արա Աստծո բոլոր զավակների սրտերը Քո Մեծ Ընծայի հանդեպ:

Օգնիր նրանց ընդունել Քո Աստվածային Գթասրտությունը սիրով և երախտագիտությամբ:

Օգնիր նրանց, որ խոնարհի դառնան Քո առջև և ներողություն խնդրեն իրենց մեղքերի համար, որպեսզի կարողանան դառնալ Քո Փառահեղ Թագավորության մասը:

Ամեն:

## *Քահանաների համար. Սուրբ Հաղորդությունը պաշտպանելու համար*

Ով սիրելի Հայր, հանուն Քո թանկագին Որդու, Ով

Զոհաբերվեց Խաչի վրա ողջ մարդկության համար, օգնիր ինձ ճշմարիտ մնալ Ճշմարտության հանդեպ:

Ծածկիր ինձ Քո Որդու Թանկագին Արյամբ և տուր ինձ Շնորհները, որ շարունակեմ ծառայել Քեզ հավատով, վստահությամբ և պատվով իմ սպասավորության ընթացքում:

Երբեք ինձ թույլ մի տուր շեղվել Սուրբ Պատարագի Զոհաբերության ճշմարիտ իմաստից, կամ Քո զավակներին Սուրբ Հաղորդությունը ներկայացնելուց:

Տուր ինձ ուժը, որ ներկայացնեմ Քեզ և սնեմ Քո հոտն այնպես, ինչպես որ պետք է կերակրվեն Քո Որդի Հիսուս Քրիստոսի՝ մարդկության Փրկչի Մարմնով, Արյամբ, Հոգով և Աստվածայնությամբ:

Ամեն:

## *Աղոթք քահանաների համար. Հիսուս, թույլ տուր ինձ լսել Քո Կանչը*

Ով իմ սիրելի Հիսուս, բաց իմ ականջները Քո ձայնի

հնչյունի հանդեպ: Բաց իմ սիրտը Քո սիրող կանչի հանդեպ: Լցրու իմ հոգին Քո Սուրբ Հոգով, որպեսզի կարողանամ ճանաչել Քեզ այս անգամ:

Ես առաջարկում եմ Քեզ իմ խոնարհ հավատարմությունը այն ամենի հանդեպ, ինչ Դու խնդրում ես ինձ: Օգնիր ինձ զանազանել ճշմարտությունը, բարձրանալ, պատախանել և հետևել Քո ձայնին, որպեսզի կարողանամ օգնել Քեզ փրկելու ողջ մարդկության հոգիները:

Քո կամքն իմ հրամանն է: Տուր ինձ արիությունը թույլ տալու Քեզ առաջնորդել ինձ, որպեսզի կարողանամ վերցնել այն սպառազինությունը, որն անհրաժեշտ է առաջնորդելու համար Քո Եկեղեցին դեպի Քո Նոր Թագավորություն:

Ամեն:

## *Խաչակրաց աղոթք՝ դարձի համար*

Ով սիրելի Հիսուս ես կոչ եմ անում Քեզ գրկել

Աստծո բոլոր զավակներին և ծածկել նրանց
Քո Թանկագին Արյամբ:

Թող Քո Արյան յուրաքանչյուր կաթիլ ծածկի ամեն մի հոգու՝ պաշտպանելու համար նրան չարից:

Բաց արա բոլորի սրտերը՝ հատկապես կարծրացած հոգիների, և նրանց, ովքեր ճանաչում են Քեզ, բայց կեղտոտված են հպարտության մեղքով, որ ծնկի իջնեն և խնդրեն, որ Քո Սիրո Լույսը ողողի իրենց հոգիները:

Բաց արա նրանց աչքերը, որ տեսնեն Ճշմարտությունը, որպեսզի Քո Աստվածային Գթասրության արշալույսը ներքև հեղվի նրանց վրա, որպեսզի նրանք ծածկվեն Քո Գթասրտության Ճառագայթներով:

Դարձի բեր բոլոր հոգիներին այն շնորհների միջոցով, որոնք ես հիմա խնդրում եմ Քեզնից, սիրելի Հիսուս **(նշեք անձնական նպատակը)**:

Ես Քեզնից Գթասրտություն եմ աղերսում և առաջարկում եմ Քեզ պահեցողության այս ընծան շաբաթական մեկ օր հունիս ամսվա ընթացքում ի քավություն բոլոր մեղքերի:

Ամեն:

## *Նվիրվածության Ուխտ Աստվածային Կամքին*

Իմ սիրելի աղջիկ, ճիշտ ինչպես Իմ Հավիտենական

Հայրը կտակեց Իր Կնիքի Մեծ Ընծան մարդկությանը, նույն կերպ պետք է Նրա զավակները /տան/ իրենց նվիրվածության ուխտը Նրա Աստվածային Կամքին:

Ես խնդրում եմ Աստծո բոլոր զավակներին, ովքեր կքայլեն Նրա բանակում օգնելու համար փրկել Աստծո զավակների՝ ներառյալ կարծրացած մեղավորների հոգիները, որ տան այս ուխտի խոստումը.

<<Ով Ամենաբարձրյալ Աստված, ով Երկնավոր Հայր, Ես տալիս եմ Քեզ իմ նվիրվածության հաստատուն ուխտը՝ պատվելու և հնազանդվելու Քեզ ամեն ինչում՝ միացած երկրի վրա Քո Աստվածային Կամքին:

Ես, Քո միակ սիրելի Որդու՝ Ճշմարիտ Մեսիայի Սուրբ Արյան միջոցով, առաջարկում եմ Քեզ իմ միտքը, իմ մարմինը, իմ հոգին՝ բոլոր հոգիների անունից, որպեսզի Քո Աստվածային Կամքը կատարվի երկրի վրա ինչպես որ Երկնքում է:

Ամեն:

## *Աղոթք՝ Նախազգուշացման ընթացքում ընտանիքների դարձի գալու համար*

*Աստծո զավակներ, ամեն օր նախապատրաստվեք Նախազգուշացման համար, քանի որ այն կարող է պատահել ցանկացած ժամանակ:*

Ով սիրելի քաղցր Հիսուս, ես Գթասրտություն եմ

խնդրում իմ ընտանիքի հոգիների համար (նշեք անունները): Ես առաջարկում եմ Քեզ իմ տառապանքները, իմ փորձություններն ու աղոթքները՝ փրկելու համար նրանց հոգիները խավարի ոգուց:

Թող Քո այս զավակներից ոչ մեկը չմերժի Քեզ, ոչ էլ Գթասրտության Քո Ձեռքը:

Բաց նրանց սրտերը, որ միահյուսվեն Քո Սուրբ Սրտին, որպեսզի կարողանան փնտրել ներումը, որն անհրաժեշտ է նրանց փրկելու համար Դժոխքի կրակներից:

Տուր նրանց հնարավորությունը՝ հատուցումներ կատարելու, որպեսզի կարողանան դարձի գալ Քո Աստվածային Գթասրության Ճառագայթների հետ:

Ամեն:

## *Մեկ համաշխարհային վերահսկողությունից խուսափելու համար*

Ով սիրելի Երկնավոր Հայր,

Ի հիշատակ Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի Խաչելության, ես աղերսում եմ Քեզ՝ պաշտպանել մեզ՝ քո զավակներին այն խաչելությունից, որը պլանավորվում է Հակաքրիստոսի և նրա հետևորդների կողմից՝ Քո զավակներին ոչնչացնելու համար:

Տուր մեզ անհրաժեշտ շնորհները՝ մերժելու համար գազանի նշանը, և հեղիր մեզ վրա այն օգնությունը, որի կարիքն ունենք երկրի վրա չարիքի դեմ պայքարելու համար, որը տարածվում է նրանց կողմից, ովքեր հետևում են Սատանայի ուղուն:

Մենք խնդրում ենք Քեզ, սիրելի Հայր, որ պաշտպանես Քո բոլոր զավակներին այս սարսափելի ժամանակներում, և մեզ ուժեղ դարձնես, որ ոտքի կանգնենք և հռչակենք Քո Սուրբ Անունը միշտ:

Ամեն:

## *Կորած և անօգնական հոգիների համար*

Ով Հիսուս, օգնիր ինձ, քանի որ ես մի կորած,

անօգնանկան մեղավոր եմ խավարի մեջ:

Ես թույլ եմ և խիզախություն չունեմ Քեզ փնտրելու:

Տուր ինձ ուժը՝ կանչելու Քեզ հիմա, որպեսզի կարողանամ դուրս պրծնել իմ  հոգու խավարից:

Բեր ինձ Քո լույսի մեջ, սիրելի Հիսուս, ներիր ինձ:

Օգնիր ինձ դառնալ ամբողջական նորից և տար ինձ դեպի Քո Սերը, Խաղաղությունը և Հավիտենական Կյանքը:

Ես ամբողջապես վստահում եմ Քեզ և խնդրում՝ վերցնել ինձ մտքով, մարմնով և հոգով մինչ հնազանդվում եմ Քո Աստվածային Կամքին:

Ամեն:

## *Պահպանիր ինձ այս ճամփորդության ընթացքում*

Ով իմ սիրելի Մայր Փրկության, ես խնդրում եմ Քեզ աղոթել, որ ինձ տրվի Կյանքի Սնունդը՝ պահելու համար ինձ այս ճամփորդության ընթացքում օգնելու փրկել Աստծո բոլոր զավակներին:

Խնդրում եմ օգնիր բոլոր նրանց, ովքեր խաբվում են կեղծ կուռքերով և կեղծ աստվածներով,
Որ բացեն իրենց աչքերը Խաչի վրա Քո Որդու մահվան Ճշմարտության հանդեպ՝ փրկելու համար Աստծո զավակներից  յուրաքանչյուրին, և յուրաքանչյուրին հավիտենական կյանք բերելու համար:

Ամեն:

## *Փրկիր Իմ եղբայրներին և քույրերին*

Ո՜հ, իմ սիրելի Փրկիչ Հիսուս Քրիստոս, ընդունիր

աղոթքի և զոհողության իմ ընծան՝ օգնելու համար փրկել իմ եղբայրներին և քույրերին այն խավարի բանտից, որի մեջ նրանք գտնվում են:

Թույլ տուր ինձ օգնել՝ փրկելու նրանց հոգիները;
Ես աղերսում եմ Քեզ, որ ներես նրանց իրենց մեղքերը և խնդրում եմ, որ ողողես նրանց հոգիները Սուրբ Հոգով, այնպես որ նրանք ընկնեն Քո բազուկների մեջ, որպես այն ապաստանը, որի կարիքը նրանք ունեն այնքան հուսահատ կերպով, նախքան ընդմիշտ կկորչեն:

Ես իմ կամքն եմ հանձնում Քեզ որպես ընծա խոնարհ սպասավորությամբ և շնորհակալությամբ:
Ամեն:

## *Մահացու մեղքի մեջ գտնվողների համար*

Ով սիրելի Հիսուս, մարդկության Փրկիչ, Քո

Աստվածային Գթասրտությամբ ես աղերսում եմ անհիշաչարություն այն բոլոր խեղճ հոգիների համար, ովքեր կվերցվեն այս երկրից Նախազգուշացման ընթացքում:

Ներիր նրանց իրենց մեղքերը, և ի հիշատակ Քո Տառապանքի, ես աղերսում եմ Քեզ որ շնորհես ինձ այս յուրահատուկ շնորհը ի հատուցում նրանց մեղքերի.

Ես առաջարկում եմ Քեզ իմ անձը՝ մտքով, մարմնով և հոգով որպես հատուցում՝ փրկելու համար նրանց հոգիները և նրանց հավիտենական կյանք տալու համար:

Ամեն:

## *Հոգևորականների համար. Օգնիր ինձ մնալ հավատարիմ Քո Ամենասուրբ Խոսքին*

Ո՜հ, սիրելի Հիսուս, օգնիր ինձ միշտ հավատարիմ

մնալ Քո Ամենասուրբ Խոսքին:

Տուր ինձ զորությունը՝ վեր պահելու համար Քո Եկեղեցու Ճշմարտությունը դժվարության ժամանակներում:

Լցրու ինձ շնորհով՝ կատարելու Սուրբ Խորհուրդներն այնպես, ինչպես Դու ես մեզ սովորեցրել: Օգնիր ինձ սնել Քո Եկեղեցուն Կյանքի Հացով և հավատարիմ մնալ Քեզ նույնիսկ այն ժամանակ, երբ ինձ կարգելեն այդ:

Ազատիր ինձ խաբեության կապանքից, որի դեմ կկանգնեմ Աստծո Ճշմարիտ Խոսքը հռչակելու համար:

Ծածկիր Քո բոլոր սրբազան սպասավորներին Քո Թանկագին Արյամբ այս ժամանակ, որպեսզի մնանք քաջ, հավատարիմ և հաստատուն Քո՝ մեր սիրելի Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր նվիրվածության մեջ:

Ամեն:

## *Պահիր իմ երեխաներին ապահով ստերի թագավորից*

ԻՍ նդրում եմ, սիրելի Հիսուս, ես խնդրում եմ Քեզ

հեռու պահել իմ երեխաներին Ստերի Թագավորից,

Ես նվիրաբերում եմ այս երեխաներին (ասեք անունները) Քո Սուրբ Սրտին և խնդրում, որ Քո Թանկագին Արյան ծածկոցով լուսավորես նրանց հոգիները և ապահովությամբ վերցնես նրանց Քո սիրող բազուկների մեջ, որպեսզի նրանք պաշտպանված լինեն ամեն վնասից:

Ես խնդրում եմ, որ Դու բացես նրանց սրտերը և ողողես նրանց հոգիները Քո Սուրբ Հոգով Գիտակցության Լուսավորման ընթացքում, որպեսզի նրանք մաքրվեն ամեն մեղքից:

Ամեն:

## *Պաշտպանիր ինձ սատանայի ազդեցությունից*

Ով Մայր Աստծո, Մայր Փրկության, ծածկիր ինձ Քո

Ամենասուրբ Թիկնոցով և պաշտպանիր իմ ընտանիքը Սատանայի ու նրա ընկած հրեշտակների ազդեցությունից:

Օգնիր ինձ միշտ վստահելու Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի Աստվածային Գթասրտությանը:

Պահիր ինձ Նրա հանդեպ ունեցած սիրո մեջ և երբեք թույլ մի տուր հեռանալ Նրա ուսուցումների Ճշմարտությունից, անկախ նրանից, թե որքան փորձություններ կդրվեն իմ առջև:

Ամեն:

## *Աղոթք Հայր Աստծուն Նրա Աստվածային Կամքն ընդունելու համար*

Աստված՝ Ամենակարող Հայր, ես ընդունում եմ Քո

Աստվածային Կամքը:

Օգնիր Քո զավակներին ընդունել այն:

Թույլ մի տուր Սատանային ժխտել Քո զավակների իրավունքներն իրենց Հոր ժառանգության հանդեպ:

Երբեք թույլ մի տուր, որ հրաժարվենք պայքարել Դրախտում մեր ժառանգության համար:

Լսիր մեր աղերսները՝ աքսորելու համար Սատանային և նրա ընկած հրեշտակներին:

Ես խնդրում եմ Քեզ, սիրելի Հայր, մաքրագործել երկիրը Քո Սուրբ Գթասրտությամբ և ծածկել մեզ Քո Սուրբ Հոգով:

Առաջնորդիր մեզ՝ կազմելու համար Քո ամենասուրբ բանակը, որին տրված է գազանին ընդմիշտ աքսորելու զորությունը:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 70

***Աղոթք հոգևորականների համար, որ հաստատուն և հավատարիմ մնան Աստծո Սուրբ Խոսքին***

Ո՜հ սիրելի Հիսուս, օգնիր Քո սրբազան

սպասավորներին ճանաչել հերձվածությունը Քո Եկեղեցու ներսում, մինչ այն ծավալվում է:

Օգնիր Քո սրբազան սպասավորներին, որ հաստատուն և հավատարիմ մնան Քո Սուրբ Խոսքին:

Երբեք թույլ մի տուր, որ աշխարհիկ նկրտումները մշուշեն Քո հանդեպ ունեցած նրանց մաքուր սերը:

Տուր նրանց շնորհները, որ մաքուր և խոնարհ մնան Քո առջև և պատվեն Քո Ամենասուրբ Ներկայությունը Սուրբ Հաղորդության մեջ:

Օգնիր և առաջնորդիր այն բոլոր սրբազան սպասավորներին, ովքեր գաղջ  են Քո հանդեպ իրենց սիրո մեջ, և վերավառիր Սուրբ Հոգու կրակը նրանց սրտերի մեջ միշտ:

Օգնիր նրանց՝ հասկանալու իրենց առջև դրված գայթակղությունը, որը նպատակ ունի շեղել նրանց:
Բաց նրանց աչքերը, որպեսզի կարողանան միշտ տեսնել Ճշմարտությունը:
Օրհնիր նրանց, սիրելի Հիսուս, հիմա, և ծածկիր նրանց Քո Թանկագին Արյամբ, որ փրկես նրանց վնասվելուց:

Տուր նրանց զորությունը՝ դիմադրելու Սատանայի գայթակղությանը, որ հանկարծ չընկնեն մեղքի գոյությունը ժխտելու հմայիչ մոլորության մեջ:

Ամեն:

## *Աղոթք՝ մեզ հալածանքից պաշտպանելու համար*

Ով Հիսուս, փրկիր Աստծո զավակներին

Հակաքրիստոսից:

Պաշտպանիր մեզ երկիրը վերահսկելու պլաններից:

Տեր, փրկիր մեզ հալածանքից:

Պաշտպանիր խավար հոգիներին հակաքրիստոսից,
որպեսզի նրանք կարողանան ազատագրվել Քո Աչքում:

Օգնիր մեզ մեր թուլության մեջ:
Ուժեղացրու մեզ հոգով՝ բարձրանալու և առաջնորդելու
մեկս մյուսին, մինչ առաջ ենք քայլում Քո բանակում դեպի
Դրախտի Դարպասները:

Ես Քո կարիքն ունեմ սիրելի Հիսուս:
Ես սիրում եմ Քեզ սիրելի Հիսուս:
Ես Փառաբանում եմ Քո Ներկայությունը երկրի վրա:
Ես խուսափում եմ խավարից:

Ես պաշտում են Քեզ և հանձնվում մարմնով և հոգով,
որպեսզի կարողանաս բացահայտել ինձ Քո

Ներկայության Ճշմարտությունը, որպեսզի ես միշտ վստահեմ Քո Գթասրտությանն ամեն անգամ:

Ամեն:

## *Աշակերտի աղոթքը*

Ս իրելի Հիսուս, ես պատրաստ եմ տարածել Քո

Սուրբ Խոսքը:

Տուր ինձ քաջությունը, ուժը և գիտելիքը՝ հայտնելու ճշմարտությունը, որպեսզի որքան հնարավոր է շատ հոգիներ բերվեն Քեզ մոտ:

Վերցրու ինձ Քո Սուրբ Սրտի մեջ և ծածկիր ինձ քո Թանկագին Արյամբ, որպեսզի լցվեմ շնորհներով՝ տարածելու համար դարձ Աստծո բոլոր զավակների փրկության համար աշխարհի ամեն մասում, անկախ նրանց ունեցած հավատամքից:

Ես վստահում եմ Քեզ միշտ: Քո սիրող աշակերտ:

Ամեն:

## *Երիտասարդ հոգիների համար, երիտասարդ երեխաների համար*

Ո՜հ Հիսուս, օգնիր ինձ փրկելու երիտասարդների

հոգիները ողջ աշխարհում:

Քո շնորհի միջոցով օգնիր նրանց տեսնել Քո գոյության ճշմարտությունը:

Բեր նրանց Քո Սուրբ Սրտի մեջ և բաց նրանց աչքերը Քո Սիրո և Գթասրտության հանդեպ:

Փրկիր նրանց դժոխքի կրակներից, և իմ աղոթքների միջոցով Գթասրտություն ցույց տուր նրանց հոգիների հանդեպ:

Ամեն:

## *Զանազանության ընծայի համար*

Ով Աստծո Մայր, օգնիր ինձ նախապատրաստելու

հոգիս
Սուրբ Հոգու Ընծայի համար:

Բռնիր ձեռքս՝ ինչպես երեխայի, և Սուրբ Հոգու զորությամբ տար ինձ դեպի զանազանության ընծան տանող ճանապարհով:

Բաց արա իմ սիրտը և սովորեցրու ինձ հանձնվել մարմնով, մտքով և հոգով:

Ազատիր ինձ հպարտության մեղքից և աղոթիր, որ ինձ ներում լինի իմ բոլոր անցած մեղքերի համար, որպեսզի իմ հոգին մաքրագործվի և ես ամբոջական դառնամ, որպեսզի կարողանամ ստանալ Սուրբ Հոգու Ընծան:

Ես շնորհակալ եմ քեզ, Մայր Փրկության, քո բարեխոսության համար, և սիրով իմ սրտում սպասում եմ այդ Ընծային, որին ձգտում եմ ուրախությամբ:

Ամեն:

## *Ես Քեզ եմ տալիս իմ ցավը, Հիսուս*

Հիսուս, ես միացնում եմ իմ ցավն ու տառապանքը այն տառապանքին, որը Դու կրեցիր Գողգոթայում Քո Հոգևարքի ժամանակ:

Ինձ հասցվող ուրաքանչյուր հարված և մեղադրանք ես առաջարկում եմ Քեզ՝ ի պատիվ Քո Փշե Պսակի:

Ինձ հասցվող յուրաքանչյուր անարդար քննադատություն ես առաջարկում եմ Քեզ՝ ի պատիվ Պիղատոսի առջև Քո կրած նվաստացման:

Ուրիշների կողմից ինձ հասցվող յուրաքանչյուր ֆիզիկական տառապանք ես առաջարկում եմ ի պատիվ սյան մոտ Քո Խարազանման:

Իմ կրած յուրաքանչյուր վիրավորանք ես առաջարկում եմ ի պատիվ այն ֆիզիկական տանջանքի, որը Դու կրեցիր Փշե Պսակի ընթացքում, երբ պատռեցին Քո Աչքը:

Ամեն անգամ, երբ ես փորձում եմ կրկօրինակել Քեզ, հայտնել Քո Ուսուցումները, և երբ ծաղրի եմ ենթարկվում հանուն Քո Սուրբ Անվան, թույլ տուր ինձ օգնել Քեզ Գողգոթայի ճանապարհին:

Օգնիր ինձ ազատվել հպարտությունից և երբեք չվախենալ ընդունելու, որ ես սիրում ես Քեզ, սիրելի Հիսուս:

Իսկ երբ ամեն ինչ արդեն անհույս թվա իմ կյանքում, սիրելի Հիսուս, օգնիր ինձ քաջ լինել, հիշելով, թե ինչպես Դու կամովին թույլ տվեցիր որ խաչեն քեզ այդպիսի վայրի և դաժան ձևով:

Օգնիր ինձ ոտքի կանգնել և համարվել ճշմարիտ քրիստոնյա, Քո բանակի ճշմարիտ զինվոր, խոնարհ և զղջացող սրտով, ի հիշատակն այն Զոհաբերության, որ Դու կատարեցիր հանուն ինձ:

Բռնիր ձեռքս, սիրելի Հիսուս, և ցույց տուր ինձ, թե ինչպես կարող է իմ սեփական տառապանքը ոգեշնչել ուրիշնորին՝ միանալու Քո բանակին այն միանման մտածող հոգիների հետ, ովքեր սիրում են Քեզ:

Օգնիր ինձ ընդունելու տառապանքը և առաջարկելու այն Քեզ որպես մի ընծա՝ հոգիներ փրկելու համար այն վերջնական մարտում, որը /մղվում է/ չարի բռնակալության դեմ:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 76

### *Աթեիստի աղոթքը*

Հիսուս, օգնիր ինձ ընդունել Աստծո Սերը, մինչ այն ցույց է տրվում Ինձ:

Բաց իմ աչքերը, միտքը, սիրտն ու հոգին, որ կարողանամ փրկվել:

Օգնիր ինձ հավատալ՝ լցնելով Քո Սերը իմ սրտի մեջ:

Հետո պահիր ինձ և փրկիր ինձ կասկածի տառապանքից:

Ամեն:

## *Մեծ Բրիտանիայի համար*

Ով Երկնավոր Հայր, Աստված, Արարիչ բոլոր մարդկանց, խնդրում եմ լսիր իմ աղոթքը: Ես աղերսում եմ Քեզ, որ փրկես Բրիտանիան չարի և բռնապետության ճանկերից:

Ես խնդրում եմ, որ Դու միավորես մեզ բոլորիս, բոլոր կրոններց, հավատամքներից և գույներից, որպես մեկ ընտանիք Քո Աչքում: Տուր մեզ ուժը միավորվելու՝ անտեսելով բոլոր օրենքները, որոնք ներմուծվում են Քո Ուսուցումները օրենքից հանելու համար:

Տուր մեզ ուժ և արիություն, որ երբեք չլքենք Քեզ, և օգնենք փրկել Քո բոլոր զավակներին մեր աղոթքների միջոցով:

Բեր իմ բոլոր եղբայրներին և քույրերին, որ միասնության մեջ պատվենք մեզ հավիտենական կյանք բերելու և Քո Դրախտը մտնելու Քո Խոստումը:

Ամեն:

## *Փրկիր ինձ չարից*

Ով Հիսուս, պաշտպանիր ինձ Սատանայի ուժից:

Տար ինձ Քո Սրտի մեջ, մինչ ես բաց եմ թողնում նրա ու նրա չար ուղիների հանդեպ ունեցած իմ ողջ նվիրվածությունը:

Ես թողնում եմ իմ կամքը և գալիս Քո առջև ծնկի եկած, խոնարհ և զղջացող սրտով:

Ես թողնում եմ իմ կյանքը Քո Սուրբ Բազուկների մեջ: Փրկիր ինձ չարից: Ազատիր ինձ և տար ինձ Քո պաշտպանության ապահով ապաստանը հիմա և հավիտյան:

Ամեն:

## *Երկու միլիարդ կորած հոգիների համար*

Ով սիրելի Հիսուս, ես աղերսում եմ Քեզ հեղել Քո

Գթասրտությունը կորած հոգիների վրա:

Ներիր նրանց որ մերժում են Քեզ և օգտագործիր իմ աղոթքն ու տառապանքը, որպեսզի կարողանաս Քո Գթասրտության միջոցով նրանց վրա հեղել այն Շնորհները, որի կարիքն ունեն իրենց հոգիները սրբագործելու համար:

Ես խնդրում եմ Քեզնից անհիշաչարության ընծան նրանց հոգիների համար:

Ես խնդրում եմ Քեզ բացել նրանց սրտերը, այնպես որ նրանք գան Քեզ մոտ և խնդրեն Քեզ լցնել իրենց Սուրբ Հոգով, որպեսզի կարողանան ընդունել Քո Սիրո Ճշմարտությունը և ընդմիշտ ապրեն Քեզ հետ ու Աստծո ողջ ընտանիքի հետ:

Ամեն:

## *Նրանց հոգիների համար, ովքեր մարդասպանություն են գործում*

Ո՜հ սիրելի Հիսուս, ես Գթասրտություն են աղերսում

նրանց համար, ովքեր մարդասպանություն են գործում:

Ես կոչ եմ անում անհիշաչարության՝ մահացու մեղքի մեջ գտնվողների հանդեպ: Ես առաջարկում եմ իմ սեփական տառապանքներն ու դժվարությունները Քեզ, որպեսզի կարողանաս բացել Քո Սիրտը և ներել նրանց իրենց մեղքերը:

Ես խնդրում եմ, որ Դու Քո Թանկագին Արյամբ ծածկես բոլոր նրանց, ովքեր չար մտադրություններ ունեն իրենց հոգիների մեջ, որպեսզի նրանք կարողանան մաքրվել իրենց անօրենություններից:

Ամեն:

## *Սուրբ Հաղորդության Ընծայի համար*

Ով Երկնային Նշխար, լցրու իմ մարմինն այն

սնուցմամբ, որի կարիքը նա ունի: Լցրու հոգիս Հիսուս Քրիստոսի Աստվածային Ներկայությամբ:

Տուր ինձ շնորհները՝ իրականացնելու Աստծո Սուրբ Կամքը:

Լցրու ինձ այն խաղաղությամբ և հանդարտությամբ, որ գալիս է Քո Սուրբ Ներկայությունից: Երբեք թույլ մի տուր ինձ կասկածել Քո Ներկայությանը:

Օգնիր ինձ ընդունել քեզ մարմնով և հոգով, և որ Սուրբ Հաղորդության միջոցով ինձ վրա հեղված Շնորհներն օգնեն ինձ հռչակել մեր Տեր Հիսուս Քրիստոսի Փառքը:

Մաքրագործիր իմ սիրտը: Բաց իմ հոգին և սրբագործիր ինձ, երբ ես ստանամ Սուրբ Հաղորդության մեծ Ընծան:

Տուր ինձ այն շնորհներն ու բարեհաճությունները, որոնք նա /Սուրբ Հաղորդությունը/ հեղում է Աստծո բոլոր զավակների վրա, և տուր ինձ իմունիտետ քավարանի կրակների հանդեպ:

Ամեն:

## *Մնացորդ Եկեղեցու հաղթանակի համար*

Հիսուս, աշխարհի Թագավոր և Փրկիչ, Քեզ ենք մենք

տալիս պատիվ, հավատարմություն և գործեր՝ Քո Փառքը բոլորին հռչակելու համար:

Օգնիր մեզ ձեռք բերել այն ուժն ու վստահությունը, որ կանգնենք և հայտարարենք Ճշմարտությունը միշտ: Երբեք թույլ մի տուր մեզ տատանվել կամ հապաղել դեպի հաղթանակ մեր քայլքի մեջ և հոգիներ փրկելու մեր ծրագրում:

Մենք խոստանում ենք հանձնվել, տալ մեր սրտերը և այն ամենն ինչ ունենք, որ ազատ լինենք խոչընդոտներից, մինչ կշարունակենք դեպի Նոր Դրախտի դարպասները տանող փշոտ ճանապարհը:

Մենք սիրում ենք Քեզ, թանկագին Հիսուս՝ մեր Փրկիչ և Ազատարար:

Մենք միավորվում ենք մարմնով, մտքով և ոգով Քո Սուրբ Սրտի ներսում:

Հեղիր մեզ վրա Քո Պաշտպանության Շնորհը:

Ծածկիր մեզ Քո Թանկագին Արյամբ, որպեսզի մենք լցվենք արիությամբ և սիրով, կանգնելու համար և հայտարարելու Քո Նոր Թագավորության մասին Ճշմարտությունը:

Ամեն:

## *Երկնային պատիժների մեղմացման համար*

Ով սիրելի Հայր՝ Աստված Ամենաբարձրյալ, մենք,

Քո խեղճ զավակները, ընկնում ենք Քո առջև Քո Փառապանծ Երկնային Գահի մոտ:

Մենք աղերսում ենք Քեզ ազատել աշխարհը չարից:

Մենք աղերսում ենք Քո Գթասրտությունը նրանց հոգիների համար, ովքեր սարսափելի դժբախտություններն են պատճառում Քո զավակներին երկրի վրա: Խնդրում ենք, ներիր նրանց:

Խնդրում ենք, հեռացրու հակաքրիստոսին, հենց որ նա իրեն հայտնի դարձնի:

Մենք խնդրում ենք Քեզ, սիրելի Տեր, մեղմացնել Քո Երկնային Պատժի Ձեռքը: Դրա փոխարեն աղերսում ենք Քեզ ընդունել մեր աղոթքներն ու տառապանքները՝ թեթևացնելու համար Քո զավակների տառապանը հիմա:

Մենք վստահում ենք Քեզ: Մենք պատվում ենք Քեզ: Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ այն մեծ զոհաբերության համար, որ Դու կատարեցիր երբ

ուղարկեցիր Քո միակ Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, մեզ մեղքից փրկելու համար:

Մենք ողջունում ենք Քո Որդուն, մեկ անգամ ևս, որպես մարդկության Փրկիչ:

Խնդրում ենք, պաշտպանիր մեզ: Պահիր մեզ վնասվելուց: Օգնիր մեր ընտանիքներին:

Գթա մեզ:

Ամեն:

# Աշխարհը ղեկավարող էլիտայի հոգիների լուսավորման համար

Ով սիրելի Հիսուս, ես խնդրում եմ Քեզ լուսավորել

ընտրյալների հոգիները, ովքեր ղեկավարում են աշխարհը:

Ցույց տուր նրանց Քո Գթասրտության ապացույցը: Օգնիր նրանց, որ դառնան սրտով բաց և ճշմարիտ խոնարհություն ցույց տան ի պատիվ Քո մեծ զոհաբերության՝ Խաչի վրա Քո մահվամբ, երբ Դու մեռար նրանց մեղքերի համար:

Օգնիր նրանց զանազանել, թե Ով է իրենց Ճշմարիտ Ստեղծողը, Ով է իրենց Արարիչը, և լից նրանց Շնորհներով, որ տեսնեն Ճշմարտությունը:

Խնդրում եմ կանխիր նրանց պլանները, որ ուղղված են վնասելու միլիոնավոր մարդկանց վակցինացիաների, սննդի պակասության, անմեղ երեխաների պարտադրաբար որդեգրման, ընտանիքների բաժանման միջոցով, որ դրանք չկատարվեն:

Բուժիր նրանց:

Ծածկիր նրանց Քո Լույսով և տար նրանց Քո Սրտի մեջ, որ փրկես նրանց չարի թակարդներից:

Ամեն:

## *Ամերիկայի Միացյալ Նահագները խաբեբայից փրկելու համար*

Ով սիրելի Հիսուս, ծածկիր մեր ազգը Քո Թանկագին

Պաշտպանությամբ:

Ներիր մեզ մեր մեղքերը Աստծո Պատվիրանների դեմ: Օգնիր ամերիկայի ժողովրդին ետ դառնալ դեպի Աստված: Բաց նրանց մտքերը Տիրոջ Ճշմարիտ Ճանապարհի հանդեպ: Բաց նրանց կարծրացած սրտերը, որպեսզի նրանք ողջունեն Քո Գթասրտության Ձեռքը:

Օգնիր այս ազգին՝ դեմ կանգնելու այն անարգանքներին, որ կպարտադրվեն նրանց՝ ստիպելու ժխտել Քո Ներկայությունը:

Մենք խնդրում ենք Քեզ, Հիսուս, փրկել մեզ, պաշտպանել մեզ ամեն վնասից և գրկել մեր ժողովրդին Քո Սուրբ Սրտի մեջ:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք (86)

### *Ազատիր ինձ կասկածի տառապանքից*

Ես գալիս եմ Քո առջև շփոթված, անվստահ և վշտացած, սիրելի Հիսուս, որովհետև անհանգստացած եմ այն Ճշմարտության մասին, որը Դու հռչակում ես Քո Պատգամներում:

Ներիր ինձ, եթե ես ցավ եմ պատճառել Քեզ: Ներիր ինձ, եթե ես չեմ կարողանում լսել Քեզ:

Բաց արա աչքերս, որպեսզի տեսնեմ, թե Դու ինչն ես ուզում որ ես հասկանամ:

Ես աղերսում եմ Քեզ տալ ինձ Սուրբ Հոգու Զորությունը, որ ցույց տա ինձ Ճշմարտությունը:

Ես սիրում եմ Քեզ, սիրելի Հիսուս, և խնդրում եմ Քեզ ազատել ինձ կասկածի տառապանքից:

Օգնիր ինձ պատասխանել Քո Կանչին:

Ներիր ինձ, եթե ես վիրավորել եմ Քեզ, և ավելի մոտեցրու ինձ Քո Սուրբ Սրտին:

Ուղղություն տուր ինձ դեպի Քո Նոր Թագավորություն և շնորհ արա ինձ, որպեսզի իմ աղոթքների և տառապանքների միջոցով կարողանամ օգնել Քեզ փրկելու Քո Սրտին այնքան թանկ հոգիները:

Ամեն:

## *Պաշտպանիր մեր ազգը չարից*

Ով Հայր, հանուն Քո Որդու, փրկիր մեզ

կոմունիզմից: Փրկիր մեզ բռնապետությունց:

Պաշտպանիր մեր ազգը հեթանոսությունից:

Փրկիր մեր երեխաներին վնասվելուց:

Օգնիր մեզ տեսնել Աստծո Լույսը:

Բաց մեր սրտերը Քո Որդու Ուսուցումների հանդեպ: Օգնիր բոլոր եկեղեցիներին հավատարիմ մնալ Աստծո Խոսքին:

Մենք խնդրում ենք Քեզ պաշտպանել մեր ազգերը հալածանքից:

Թանկագին Տեր, Գթասրտությամբ նայիր մեզ վրա, անկախ նրանից, թե որքան ենք մենք վիրավորում Քեզ:

Հիսուս, մարդու Որդի, ծածկիր մեզ Քո Թանկագին Արյամբ:

Փրկիր մեզ չարի թակարդներից:

Մենք աղերսում եք Քեզ, սիրելի Տեր, միջամտել և դադարեցնել հիմա աշխարհը ողողող չարիքը:

Ամեն:

## *Հոգիների համար՝ Նախազգուշացումից հետո*

Ով Հիսուսի Սուրբ Սիրտ, Գթասրտություն ցույց տուր մեզ բոլորիս՝ խեղճ մեղավորներիս:

Լուսավորիր այն բոլոր քար սրտերը, որոնք այնքան հուսահատորեն ուղղորդության կարիք ունեն:

Ներիր նրանց իրենց անօրինությունները:

Օգնիր նրանաց Քո Սիրով և Գթասրտությամբ գտնել իրենց սրտերի մեջ՝ հասկանալու Ազատագրման Քո մեծ Ընծան:

Ես աղերսում եմ Քեզ ներել բոլոր հոգիներին, ովքեր մերժում են Աստծո Ճշմարտությունը:

Ծածիր նրանց Քո Լույսով, սիրելի Հիսուս, որպեսզի այն կուրացնի նրանց սատանայի չարության և թակարդների հանդեպ, ով կփորձի կտրել նրանց Քեզնից հավիտենությունը:

Ես աղերսում եմ Քեզ տալ Աստծո բոլոր զավակներին ուժ, որպեսզի նրանք շնորհակալ լինեն Քո Մեծ Գթասրտության համար:

Ես խնդրում եմ որ Դու բացես Քո Թագավորության Դուռը բոլոր հոգիների համար, որ թափառում են երկրի վրա անօգնական և անհույս վիճակում:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 89

### *Թշվառ մեղավորների համար*

Ուիրելի Հիսուս, օգնիր ինձ՝ խեղճ թշվառ մեղավորիս, գալ Քեզ մոտ իմ հոգու մեջ զղջումով:

Մաքրագործիր ինձ այն մեղքերից, որոնք կործանել են իմ կյանքը:

Տուր ինձ նոր կյանքի ընծան՝ ազատ մեղքի կապանքներից, և այն ազատությունը, որն իմ մեղքերը մերժում են ինձ:

Նորացրու ինձ Քո Գթասրտության Լույսի մեջ: Գրկիր ինձ Քո Սրտում:

Թույլ տուր ինձ զգալ Քո Սերը, որպեսզի կարողանամ մոտ գալ Քեզ, և որպեսզի Քո հանդեպ իմ սերը բոցավառվի:

Գթա ինձ, Հիսուս, և ազատ պահիր ինձ մեղքից:

Արժանի դարձրու ինձ մտնել Քո Նոր Դրախտը:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 90

### *Շնորհակալություն Քո Ամենափառավոր Երկրորդ Գալուստի համար*

Ով իմ Հիսուս, ես առաջարկում եմ Քեզ

գովաբանություն և շնորհակալություն Քո Փառահեղ Երկրորդ Գալուստի համար:

Դու, իմ Փրկիչ, ծնվեցիր ինձ հավիտենական կյանք տալու և մեղքից ազատելու համար:

Ես առաջարկում եմ Քեզ իմ սերը, իմ շնորհակալությունը և պաշտամունքը, մինչ նախապատրաստում եմ հոգիս Քո Մեծ Գալուստի համար:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 91

### *Պահիր ինձ հավատարիմ իմ հավատքի հանդեպ*

Ով Օրհնյալ Մայր Փրկության, պաշտպանիր ինձ իմ

կարիքի ժամին, երբ ես բախվում եմ չարի հետ:

Օգնիր ինձ պաշտպանել Աստծո Խոսքը զորությամբ և արիությամբ, առանց որևէ վախի իմ հոգում:

Աղոթիր, որ ես մնամ հավատարիմ Քրիստոսի Ուսուցումներին, և որ կարողանամ ամբողջովին հանձնել իմ վախերը, անհանգստություններն ու տխրությունը ամբողջապես:

Օգնիր ինձ, որ կարողանամ անվախորեն առաջ քայլել այս միայնակ ճանապարհով, որպեսզի հռչակեմ Աստծո Սուրբ Խոսքի Ճշմարտությունը նույնիսկ /այն ժամանակ/ երբ Աստծո թշնամիներն անհնարին դարձնեն այդ առաջադրանքը:

Ով Օրհնյալ Մայր, ես խնդրում եմ, որ Քո միջնորդությամբ բոլոր քրիստոնյաների հավատը ուժեղ մնա միշտ հալածանքի ընթացքում:
Ամեն:

## *Տոկունության շնորհի համար*

Ով սիրելի Հիսուս, ես խնդրում եմ Քեզնից

Տոկունության Ընծան:

Ես աղերսում եմ Քեզ հեղել ինձ վրա այն Շնորհները, որոնց կարիքն ունեմ՝ պահելու համար Քո Ամենասուրբ Խոսքը:

Ես խնդրում եմ Քեզ, որ ազատես ինձ ցանկացած երկարատև կասկածից:

Ես խնդրում եմ Քեզ հեղեղել հոգիս բարությամբ, համբերատարությամբ և տոկունությամբ:

Օգնիր ինձ մնալ արժանապատվությամբ լի, երբ ինձ վիրավորում են հանուն Քո Սուրբ Անվան:

Դարձրու ինձ ուժեղ և ծածկիր ինձ շնորհով, որ շարունակեմ առաջ գնալ նույնիսկ այն ժամանակ երբ հոգնած եմ, ուժի պակաս ունեմ և կանգնած եմ գալիք բոլոր դժվարությունների առջև, մինչ առանց հոգնելու կաշխատեմ՝ օգնելու համար ՔԵզ փրկել մարդկությունը:

Ամեն:

## *Ապաշխարության արցունքների համար*

Ով իմ սիրելի Հիսուս, դու մոտ ես իմ սրտին:

Ես մեկ եմ ՔԵզ հետ:
Ես սիրում եմ Քեզ:
Ես փայփայում եմ Քեզ:
Թույլ տուր ինձ զգալ Քո Սերը:
Թույլ տուր ինձ զգալ Քո Ցավը:
Թույլ տուր ինձ զգալ Քո Ներկայությունը:

Տուր ինձ Խոնարհության Շնորհը, որ արժանի դառնամ Քո Թագավորությանը երկրի վրա, ինչպես Երկնքում է:

Շնորհիր ինձ Ապաշխարության Արցունքները, որպեսզի կարողանամ ճշմարիտ առաջարկել ինքս ինձ Քեզ որպես ճշմարիտ աշակերտ, օգնելու համար Քեզ երկրի վրա բոլոր հոգիներին փրկելու Քո Առաքելության մեջ, նախքան նորից կգաս՝ դատելու համար ողջերին և մեռածներին:

Ամեն:

## *Միտքը, մարմինը և հոգին բուժելու համար*

Ով սիրելի Հիսուս, ես ընկնում եմ Քո առջև՝ հոգնած,

հիվանդ, ցավի մեջ և տենչալով լսել Քո Ձայնը:

Թույլ տուր ինձ զգալ Քո Աստվածային Ներկայությունը, որպեսզի Քո Աստվածային Լույսը հեղվի ինձ վրա իմ մտքի, մարմնի և հոգու միջով:

Ես վստահում եմ Քո Գթասրտությանը:

Ես դնում եմ իմ ցավն ու տառապանքն ամբողջությամբ Քո առջև և խնդրում, որ տաս ինձ Շնորհը՝ վստահելու Քեզ, որպեսզի կարողանաս բուժել ինձ այս ցավից և խավարից, որպեսզի ես կարողանամ նորից ամբողջական դառնալ և կարողանամ հետևել Ճշմարտության Ուղուն և թույլ տալ Քեզ առաջնորդելու ինձ դեպի կյանք Նոր Դրախտի մեջ:

Ամեն:

## *Օգնել՝ աղոթքի համար ժամանակ գտնելու*

Ով Փրկության Մայր, արի ինձ օգնության, մինչ պայքարում եմ ժամանակ գտնել աղոթքի համար:

Օգնիր ինձ տալու Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսին այն ժամանակը, որին Նա արժանի է, ցույց տալու համար թե ես որքան շատ եմ Նրան սիրում:

Ես խնդրում եմ որ Դու, Իմ Օրհնյալ Մայր Փրկության, փնտրես ինձ համար շնորհները, որոնց կարիքն ունեմ, և խնդրես Քո սիրելի Որդուց ամեն շնորհը, որպեսզի Նա կարողանա պարուրել ինձ Իր Սուրբ Սրտի մեջ:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք (96)

### *Մեր խաչակրաց աղոթքի խումբն օրհնելու և պաշտպանելու համար*

*Պետք է աղոթել <<Հիսուսը՝ մարդկությանը>> աղոթախմբի հանդիպումից առաջ և հետո*

Ով իմ սիրելի Հիսուս, խնդրում եմ օրհնիր և

պաշտպանիր մեզ՝ Քո խաչակրաց աղոթքի խմբերին, որպեսզի անխոցելի դառնանք սատանայի և բոլոր չար ոգիների չար հարձակումների հանդեպ, որոնք կարող են տանջել մեզ հոգիներ փրկելու այս Սրբազան Առաքելության մեջ:

Թող մենք մնանք հավատարիմ և ուժեղ մինչ համառորեն աշխատում ենք պահել Քո Սուրբ Անունը աշխարհի առջև և երբեք չնահանջել Քո Սուրբ Խոսքը տարածելու մեր պայքարից:

Ամեն:

## *Խաչակրաց աղոթքի խմբերը միավորելու համար*

Ով սիրելի Մայր Փրկության, ես խնդրում եմ Քեզ

միավորել աշխարհով մեկ Աստծո ողջ մնացորդ բանակը քո աղոթքների միջոցով:

Ծածկիր բոլոր խաչակրաց աղոթքի խմբերը Քո Որդի Հիսուս Քրիստոսի Գթասրտությամբ մեզ վրա հեղված Փրկության Շնորհով:

Ուղարկիր Քո հրեշտակներին, որ ծածկեն մեզանից յուրաքանչյուրին, հատկապես այն քահանաներին, ովքեր ղեկավարում են Խաչակրաց աղոթքի խմբերը:

Օգնիր մեզ խուսափել շեղելուց մեր ուշադրությունը, որը մեր մեջ բաժանումներ է առաջացնում, և պաշտպանիր մեզ Քո սպառազինության ընծայով, որպեսզի անխոցելի դառնանք այն հարձակումների հանդեպ, որոնց ստիպված կլինենք դիմանալ հոգիների փրկության այս Սուրբ Առաքելության ընթացքում Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր ունեցած սիրո պատճառով:

Ամեն:

## *Որպեսզի Աստծո Շնորհը ծածկի աշխարհի առաջնորդներին*

Ով իմ Օրհնյալ Մայր Փրկության, խնդրում եմ,

խնդրիր Քո Որդուն դուրս հեղել Իր Շնորհներն ու Սերը այն առաջնորդների վրա, ովքեր վերահսկում են աշխարհը:

Աղոթիր, որ Աստծո Լույսը բուժի նրանց կուրությունից և բացի նրանց քար սրտերը:

Կանգնեցրու նրանց անմեղ ժողովուրդներին հալածանք պարտադրելուց:

Խնդրում եմ աղոթիր, որ Հիսուսն առաջնորդի նրանց և կանգնեցնի նրանց, որ չարգելեն Իր Ուսուցումների Ճշմարտությունն աշխարհով մեկ ազգերին տարածելուց:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 99

### *Ավստրալիայի և Նոր Զելանդիայի փրկության համար*

Ով Աստված, Ամենակարող Հայր, հանուն Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի, գթա Ավստրալիայի և Նոր Զելանդիայի Քո բոլոր զավակներին:

Ներիր մեզ Քո Սուրբ Խոսքը մերժելու համար:

Ներիր մեզ անտարբերության մեղքի համար:

Ազատիր մեզ մեր հեթանոս մշակույթից և ծածկիր մեզ շնորհներով՝ հույս, հավատ և ողորմածություն ոգեշնչելու մեր եղբայրների և քույրերի մոտ:

Մենք խնդրում ենք Քեզնից Զանազանության Ընծան և խնդրում ենք, որ Դու մեզ բոլորիս շնորհես օրհնությունները, որոնց կարիքն ունենք վստահանալու, որ միայն Քո Սուրբ Խոսքը կարող է լսվել, որպեսզի բոլոր հոգիներին շնորհվի հավիտենական կյանքի բանալիները:

Ամեն:

## Խաչակրաց աղոթք 100

### *Քրիստոնեության գոյատևման համար*

Ով սիրելի Հիսուս, մենք խնդրում ենք Քեզնից

հմտությունները՝ գոյատևելու համար այն փորձություններից, որոնց դեմ կանգնած ենք հիմա, մինչ վերջին ճշմարիտ Պապը ավարտում է իր Առաքելությունը Քո հանդեպ:

Օգնիր մեզ դիմանալ այն սարսափելի մեղադրանքին, որին հիմա ստիպված կլինենք դիմակայել այն եկեղեցու ավերման պատճառով, որը ժամանակին ճանաչել ենք:

Երբեք թույլ մի տուր մեզ շեղվել Քո Աստվածային Խոսքի Ճշմարտությունից:

Ծածկիր Քո բանակը վահանի պես այն հզոր սիրով, որի կարիքն ունենք՝ պաշտպանվելու համար կեղծ մարգարեից և հակաքրիստոսից:

Օգնիր, որ երկրի վրա Քո Եկեղեցին տարածվի և բազմապատկվի, որպեսզի կարողանա մնալ Ճշմարտության մեջ և օգնել Քեզ՝ առաջնորդելու մեր

եղբայրներին ու քույրերին Ճշմարտության Ճանապարհով՝ նախապատրաստվելու համար ինչպես հարկն է Քո Երկրորդ Գալուստին:

Ամեն:

## *Հրաշք աղոթք՝ Հիսուսի ներկայությունը զգալու համար*

Ով սիրելի ամենակարող Հայր, Արարիչ ամենի, որ կա և կլինի, օգնիր մեզ բոլորիս, ովքեր կարող են ճանաչել Քո սիրելի Որդու Ներկայությունը եկեղեցում այսօր, որ շատ ուժեզ դառնանք:

Օգնիր ինձ հաղթահարել վախը, միայնությունը և մերժումը, որը կրում եմ իմ սիրելիների կողմից, մինչ հետևում եմ Քո Որդուն՝ Հիսուս Քրիստոսին՝ իմ Փրկչին:

Խնդրում եմ պաշտպանիր իմ սիրելիներին թակարդն ընկնելուց, որ չհավատան Սատանայի կողմից մշակված ստերին՝ ոչնչացնելու, բաժանելու և Աստծո բոլոր զավակների միջև խառնաշփոթ ստեղծելու համար:

Խնդրում եմ օգնիր բոլոր նրանց, ովքեր հետևում են պղծությանը Քո եկեղեցում, որ փրկվեն դժոխքի հավիտենական կրակներից:

Ամեն:

## *Աշխարհին տրվող Աստծո պատգամի հանդեպ հավատքն ու հավատամքը պահպանելու համար*

Ուիրելի Հիսուս, երբ անկում եմ ապրում, վեր բարձրացրու ինձ:

Երբ կասկածում եմ, լուսավորիր ինձ:

Երբ վշտացած եմ, ցույց տուր ինձ Քո Սերը:

Երբ քննադատում եմ, օգնիր ինձ լուռ մնալ:

Երբ դատում եմ մեկ ուրիշին հրապարակայնորեն, կնքիր իմ շրթունքները:

Երբ ասում եմ հայհոյություններ Քո Անվամբ, ազատագրիր ինձ և ետ բեր ինձ Քո պաշտպանության մեջ:

Երբ խիզախության կարիք ունեմ,տուր ինձ անհրաժեշտ սուրը՝ մարտնչելու և փրկու հոգիներին, որոնց կամենում ես:

Երբ դիմադրում եմ Քո Սիրուն, օգնիր ինձ անձնատուր լինել և հանձնվել Քեզ ամբողջությամբ Քո Սիրառատ Խնամքի ներքո:

Երբ մոլորվեմ, օգնիր ինձ գտնել Ճշմարտության Ճանապարհը:

Երբ կասկածի տակ եմ դնում Քո Խոսքը, տուր ինձ պատասխանները, որ փնտրում եմ:

Օգնիր ինձ լինել համբերատար, սիրող և բարի, նույնիսկ նրանց հանդեպ, ովքեր հայհոյում են Քեզ:

Օգնիր ինձ՝ ներել նրանց, ովքեր վիրավորում են ինձ և տուր ինձ շնորհը, որի կարիքն ունեմ՝ հետևելու Քեզ մինչև երկրի ծայրերը:

Ամեն:

## *Քրիստոսի հետ Տառապանքի Գավաթը կիսելու համար*

Ես գետնամած ընկնում եմ Քո առջև, Սիրելի Հիսուս,

և Քո Ոտքերի մոտ՝ ինձ հետ անելու այն, ինչ ցանկանում ես, բոլորի բարիքի համար:

Թույլ տուր ինձ կիսել Քո Տառապանքի Գավաթը:

Վերցրու այս ընծան ինձնից, որ կարողանաս փրկել այն խեղճ հոգիներին, ովքեր կորած են և առանց հույսի:

Վերցրու ինձ մարմնով, որ կարողանամ կիսել Քո Ցավը:

Պահիր իմ սիրտը Քո Սուրբ Ձեռքերի մեջ և բեր իմ հոգին միության մեջ Քեզ հետ:

Տառապանքի իմ ընծայի միջոցով ես թույլ եմ տալիս Քո Աստվածային Ներկայությանը գրկել իմ հոգին, որպեսզի Դու կարողանաս ազատագրել բոլոր մեղավորներին և միավորել Աստծո բոլոր զավակներին հավիտյանս հավիտենից:

Ամեն:

Ձեր կողմից այս զոհողությունը, ներկայացված Ինձ՝ Հիսուս Քրիստոսին, ողջ մարդկության ազատարարին, հնարավորություն կտա Ինձ դուրս հեղելու Իմ Մեծ Գթասրտությունը ողջ աշխարհի վրա:

Ավելի կարևորը՝ Ես կփրկեմ նույնիսկ նրանց, ովքեր ատում են Ինձ: Ձեր աղոթքներն ու զոհողությունները նրանց միակ փրկարար շնորհն են, քանի որ առանց դրանց նրանք կոչնչացվեն չարի կողմից:

Ես կշնորհեմ ձեզ մեծ օրհնություններ և կխնդրեմ,որ շարունակեք Ինձ հետ Իմ ճամփորդության մեջ՝ արթնացնելու համար աշխարհն իր թմիրից, և այդպիսով Ես կկարողանամ վեր բարձրացնել խաբեության քողը, որը ծածկում է աշխարհը:

Ձեր Հիսուս

## *Փրկիր այս հոգին ստրկությունից*

Թանկագին Հիսուս, ես ներկայացնում եմ Քեզ իմ

եղբոր և քրոջ հոգին, ովքեր հանձնել են իրենց հոգին Սատանային:

Վերցրու այս հոգին և ազատագրիր այն Քո Սուրբ Աչքում:

Ազատիր այս հոգին գազանի ստրկությունից և բեր նրան հավիտենական փրկություն:

Ամեն:

## *Դարձի ընծան ուրիշների համար*

Ով իմ սիրելի Հիսուս, Քո հանդեպ իմ սիրով

խնդրում եմ ընդունիր իմ հոգին Քեզ հետ միության մեջ:

Վերցրու հոգիս, ծածկիր այն Քո Սուրբ Հոգով և օգնիր ինձ այս աղոթքի միջոցով փրկել բոլոր նրանց, ում հանդիպում եմ:

Ողողիր Քո Սուրբ Գթասրտությամբ յուրաքանչյուր հոգու, ում հանդիպում եմ, և առաջարկիր նրանց փրկությունը, որն անհրաժեշտ է Քո Թագավորություն մտնելու համար:

Լսիր իմ աղոթքները: Լսիր իմ աղաչանքները, և Քո Գթասրտությամբ փրկիր ողջ մարդկության հոգիները:

Ամեն:

## *Խնդրական աղոթքներ*

## Հիսուսը մարդկությանը խնդրական աղոթք (1)

# *Պաշտպանություն կեղծ մարգարեից*

*Թանկագին Հիսուս, փրկիր մեզ կեղծ մարգարեի*

*խաբեությունից:*
*Հիսուս գթա մեզ:*
*Հիսուս փրկիր մեզ հալածանքից:*
*Հիսուս պահպանիր մեզ Հակաքրիստոսից:*
*Տեր գթա:*
*Քրիստոս գթա:*

*Թանկագին Հիսուս ծածկիր մեզ Քո Թանկագին Արյամբ:*
*Թանկագին Հիսուս բաց մեր աչքերը Կեղծ Մարգարեի ստերի հանդեպ:*

*Թանկագին Հիսուս միավորիր Քո Եկեղեցին:*

*Հիսուս պաշտպանիր մեր սրբությունները:*
*Հիսուս թույլ մի տուր որ Կեղծ Մարգարեն բաժանի Քո Եկեղեցին:*
*Սիրելի Հիսուս օգնիր մեզ մերժել այն ստերը, որոնք կներկայացվեն մեզ որպես ճշմարտությունը:*

*Հիսուս Զորություն տուր մեզ:*
*Հիսուս Հույս տուր մեզ:*
*Հիսուս հեղեղիր մեր հոգիները Սուրբ Հոգով:*

*Հիսուս պաշտպանիր մեզ Գազանից:*

*Հիսուս տուր մեզ զանազանության ընծան, որպեսզի կարողանանք հետևել Քո ճշմարիտ Եկեղեցու ուղուն միշտ, հավիտյանս հավիտենից:*

*Ամեն:*

## *<<Իմունիտետի շնորհի համար>>*

*Ո՛վ Ամենաբարձրյալ Երկնավոր Հայր,*

*Ես սիրում եմ Քեզ:*
*Ես պատվում եմ Քեզ:*
*Տեր, գթա՛:*
*Տե՛ր, ներիր մեզ մեր հանցանքները:*
*Ես պաշտում եմ Քեզ:*
*Ես փառաբանում եմ Քեզ:*
*Ես Քեզ շնորհակալություն եմ հայտնում Քո բոլոր յուրահատուկ Շնորհների համար:*
*Ես Քեզնից աղերսում եմ իմունիտետի շնորհը իմ սիրելիների համար*
*(թվարկեք բոլոր նրանց անունները՝ հոգիների փրկության համար):*

*Ես առաջարկում եմ Քեզ իմ հավատարմությունը միշտ:*
*Դու, ով Ամենաբարձրյալ Երկնավոր Հայր,*
*Արարիչ ամեն բանի,*
*Արարիչ Տիեզերքի,*
*Արարիչ մարդկության,*
*Դու ամեն բանի աղբյուրն ես:*
*Դու Սիրո աղբյուրն եք:*
*Դու Մեր ես:*

*Ես սիրում եմ Քեզ:*

*Ես պատվում եմ Քեզ:*
*Ես դնում եմ ինձ Քո առջև:*
*Ես Գթասրտություն եմ խնդրում այն բոլոր հոգիների համար, ովքեր չեն ճանաչում Քեզ,*
*ովքեր չեն պատվում Քեզ,*
*ովքեր մերժում են Քո Գթասրտության Ձեռքը:*
*Ես տալիս եմ ինձ Քեզ մտքով, մարմնով և հոգով,*
*Որպեսզի Դու կարողանաս վերցնել նրանց Քո Բազուկների մեջ՝ ապահով չարից:*
*Ես խնդրում եմ Քեզ բացել Դրախտի Դարպասը, որպեսզի Քո բոլոր զավակները*
*Կարողանան միավորվել վերջապես այն ժառանգության մեջ, որը Դու ստեղծել ես մեզ բոլորիս համար:*
*Ամեն:*

## *Պաշտպանել Աստծո Խոսքը*

*Ով սիրելի Հիսուս, պաշտպանիր մեզ ստերից, որոնք վիրավորում են Աստծուն:*

*Պաշտպանիր մեզ սատանայից և նրա բանակից:*
*Օգնիր մեզ Քեզ ավելի շատ սիրել:*
*Պահիր մեզ մեր մարտի մեջ:*
*Պաշտպանիր մեզ մեր հավատի մեջ:*
*Տար մեզ դեպի ապահովության Քո ապաստանը:*
*Օգնիր մեզ ոտքի կանգնել և պաշտպանել Քո Սուրբ Կամքը:*
*Ուժեղացրու մեր որոշումը լինելու Քո ճշմարիտ աշակերտները:*
*Տուր մեզ քաջություն:*
*Տուր մեզ վստահություն:*
*Ուղղություն տուր մեզ ճշմարտության ճանապարհին:*
*Պաշտպանիր մեզ թշնամուց:*
*Հեղիր մեզ վրա Քո Պաշտպանության Շնորհները:*
*Օգնիր մեզ խուսափել գայթակղությունից:*
*Մեզ ավելի մոտեցրու Քո Սուրբ Սրտին:*
*Օգնիր մեզ միշտ մնալ Քեզ հավատարիմ:*
*Ամեն:*

## *Հայր Աստծո պատիժը մեղմացնելու համար*

*Ո՛վ Ամենաբարձրյալ Աստված,*

*Մենք Քո Գթասրտությունն ենք խնդրում քո զավակների մեղքերի համար:*
*Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ երկրի Ընծայի համար:*
*Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ մարդկային կյանքի Ընծայի համար:*
*Մենք գանձի պես պահում ենք կյանքի ընծան:*
*Մենք պահպանում ենք կյանքի Ընծան:*

*Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի Ընծայի համար:*
*Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ ազատագրման Ընծայի համար:*
*Մենք գովաբանում ենք Քո Աստվածայնությունը:*

*Մենք ամբողջությամբ ենթարկվում ենք Քեզ, որպեսզի Քո Սուրբ Կամքը կատարվի երկրի վրա ինչպես Երկնքում է:*

*Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ Գիտակցության Լուսավորման Ընծայի համար:*
*Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ հավիտենական կյանքի խոստումի համար:*
*Մենք ողջունում ենք Նոր Դրախտը:*

*Մենք խնդրում ենք Քեզ փրկել բոլոր հոգիներին, ներառյալ նրանց, ովքեր տառապանք են պատճառում Քեզ և ովքեր կորած են Քեզ համար:*

*Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ Քո բոլոր զավակների հանդեպ սիրո համար:*
*Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ մարգարեության Ընծայի համար:*
*Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ աղոթքի Ընծայի համար:*

*Մենք խնդրում ենք Քեզ շնորհել մեզ խաղաղություն և փրկություն:*
*Ամեն:*

## *Մահացու մեղքի մեջ գտնվողների համար*

*Հիսուս, փրկիր բոլոր մեղավորներին դժոխքի*

*կրակներից:*

*Ներիր սևացած հոգիներին:*
*Օգնիր նրանց, որ տեսնեն Քեզ:*
*Վեր բարձրացրու նրանց խավարից:*
*Բաց նրանց աչքերը:*
*Բաց նրանց սրտերը:*
*Ցույց տուր նրանց Ճշմարտությունը:*
*Փրկիր նրանց:*
*Օգնիր նրանց, որ լսեն:*
*Ազատիր նրանց հպարտությունից, ընչաքաղցությունից և նախանձից:*
*Պաշտպանիր նրանց չարից:*
*Լսիր նրանց օգնության աղերսները:*
*Բռնիր նրանց ձեռքերը:*
*Զգիր նրանց դեպի Քեզ:*

*Փրկիր նրանց սատանայի խաբեություններից:*

*Ամեն:*

## *Մեր Խաչակրաց աղոթքի խմբերն օրհնելու և պաշտպանելու համար*

Ով իմ սիրելի Հիսուս, խնդրում եմ օրհնիր և

պաշտպանիր մեզ՝ Քո խաչակրաց աղոթքի խմբերին, որպեսզի անխոցելի դառնանք սատանայի և բոլոր չար ոգիների չար հարձակումների հանդեպ, որոնք կարող են տանջել մեզ հոգիներ փրկելու այս Սրբազան Առաքելության մեջ:

Թող մենք մնանք հավատարիմ և ուժեղ մինչ համառորեն աշխատում ենք պահել Քո Սուրբ Անունը աշխարհի առջև և երբեք չնահանջել Քո Սուրբ Խոսքը տարածելու մեր պայքարից:

Ամեն:

## Հայր Աստված. Աղոթք՝ Նոր Դրախտի Բանալու համար

***Չորեքշաբթի, ապրիլ 10, 2013, երեկոյան ժ. 04:45***

*Սիրելի Հայր, այդ Ես եմ՝ Քո կորած զավակը, ով այնքան շփոթված է և կույր, որ առանց Քո Օգնության, Քո Սիրո, ոչինչ է: Փրկիր ինձ Քո Որդի Հիսուս Քրիստոսի Սիրո միջոցով, և տուր ինձ երկրի վրա Քո Նոր Դրախտի բանալին: Ամեն:*

## Աղոթք՝ փրկության համար

***Երեքշաբթի, նոյեմբեր 16, 2010, առավոտյան ժ. 09:55***

*Ով Տեր իմ, առաջնորդիր ինձ Քո Թագավորություն և պաշտպանիր ինձ այն խավարից, որը ողողել է հոգիս: Լսիր ինձ հիմա, ով Սուրբ Սիրտ, և Քո բարությամբ թող Քո սիրո և պաշտպանության Լույսը փայլի: Ամեն:*

## Աթեիստի աղոթքը

***Հինգշաբթի, նոյեմբեր 18, 2010, երեկոյան ժ. 09:00***

*Աստված, եթե Դու Ճշմարտությունն ես, բացահայտիր ինձ Քո Սիրո նշանը: Բաց իմ սիրտը, որ առաջնորդություն ստանամ: Եթե Դու Գոյություն ունես, թույլ տուր ինձ զգալ Քո Սերը, որ կարողանամ տեսնել Ճշմարտությունը: Աղոթիր ինձ համար հիմա: Ամեն:*

## Աղոթք չհավատացողների համար, ովքեր ծիծաղում են, ծաղրում կամ բացահայտ արհամարհում նրանց, ովքեր աղոթում են

***Կիրակի, նոյեմբեր 21, 2010, առավոտյան ժ. 01:30***

*Իմ սիրելի Տեր, ես պարզում եմ ձեռքերս՝ խնդրելու համար Քեզ, որ վերցնես իմ սիրելի եղբորը/քրոջը Քո քնքուշ Բազուկների մեջ: Օրհնիր նրանց Քո Սուրբ Արյամբ և տուր նրանց անհրաժեշտ շնորհը, թույլ տալու համար նրանց ստանալ Քո Սիրո Ոգին, որ տանի նրանց դեպի հավիտենական փրկություն:*

## Աղոթք, որ Հիսուսը բացահայտի ձեզ Իր Ներկայությունը

***Երկուշաբթի, նոյեմբեր 22, 2010թ, առավոտյան ժ. 02:00***

*Հիսուս, ես կորած եմ զգում: Բաց իմ սիրտը՝ ընդունելու Քո Սերը և ցույց տուր ինձ Ճշմարտությունը, որպեսզի ես փրկվեմ:*

## Աղոթք՝ ուրիշներին դարձի բերելու համար

***Շաբաթ, ապրիլ 16, 2011թ, առավոտյան ժ. 10:00***

*Ես կոչ եմ անում Քեզ, Հիսուս, Քո Աստվածային Գթասրտությամբ, որ ծածկես գաղջ հոգիներին Քո Թանկագին Արյամբ, որպեսզի նրանք կարողանան դարձի գալ:*

## Աղոթք խրախուսանքի համար

***Երեքշաբթի, մայիս 10, 2011թ, ցերեկվա ժ. 04:00***

*Լցրու ինձ հիմա, ով Տեր, Սուրբ Հոգու Ընծայով, որ տանեմ Քո Ամենասուրբ Խոսքը մեղավորներին, որոնց ես պետք է օգնեմ փրկվել Քո Անվամբ: Օգնիր ինձ իմ աղոթքների միջոցով ծածկել նրանց Քո Թանկագին Արյամբ, որպեսզի նրանք կարողանան բերվել դեպի Քո*

*Սուրբ Սիրտը: Տուր ինձ Սուրբ Հոգու Ընծան, որպեսզի այդ խեղճ հոգիները կարողանան զվարճանալ Քո Նոր Դրախտում:*

## Աղոթք ամեն օրվա համար

***Կիրակի, 24 հուլիսի, 2011թ, երեկոյան ժ. 11:00***

*Ով իմ թանկագին Հիսուս, գրկիր ինձ Քո Բազուկների մեջ և թույլ տուր որ գլուխս հանգստանա Քո Ուսերին, որպեսզի կարողանաս ինձ վեր բարձրացնել Քո Փառապանծ Թագավորություն, երբ ժամանակը գա: Թույլ տուր Քո Թանկագին Արյունը հոսի իմ սրտի վրա, որպեսզի մենք կարողանանք միավորվել որպես մեկ:*

## Աղոթք, որ կարողանանք տեսնել որ այս Պատգամներն Աստվածային ծագում ունեն

***Երկուշաբթի,օգոստոս 15, 2011թ, առավոտյան ժ. 12:00***

*Հիսուս, եթե այդ իսկապես Դու ես, խնդրում եմ ողողիր հոգիս Քո Աստվածային Սիրո նշանով, որպեսզի կարողանամ ճանաչել Քեզ որպես Նա, Ով Դու Ես: Թույլ մի տուր որ ես խաբվեմ ստերից: Փոխարենը ցույց տուր ինձ Քո Գթասրտությունը՝ բացելով իմ աչքերը Ճշմարտության հանդեպ և դեպի երկրի վրա Քո Նոր Դրախտի ճանապարհը:*